

ԱՐՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԿՐՏԶՅԱՆ

ՆԱԽԱՇԱՎԻՂ ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՄԱՅԻ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՄԻՆ
1991 թ.

ՉԻ - 34

հշ:

ԱՐԻԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԿՐՏԶՅԱՆ

1166

ՆԱԽԱՇԱՎԻՂ

ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԿՐԳՈՒԹՅԱՆ

(ԵՐԿՐՈՐԴ՝ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ «ՄՈՄԻԿ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ)



ԵՐԵՎԱՆ 1991 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ




Մերեկ ընկերացոյ.

Հույս ունեմ, որ այս գիրքը կդառնա քո կյանքի ուղեկիցը. սրտնով դու կատարում ես բրիստոնեոսթյունն ու սեր ազգային Մայր Եկեղեցին ճանաչելու քո առաջին քայլը: Այն գրված է մատչելի լեզվով, յուրաքանչյուր դասից ճեռու կա ընկերացանոսթյուն և առաջադրանք: Աշխատիր Համբերությամբ սերտել յուրաքանչյուր դաս, մի բանի անգամ կարգալ ընկերացանոսթյան Հատվածները. Հոգևորացած եմ, որ չես զգանա կատարել առաջադրանքները՝ ունենալու Համար Աստվածաշնչի կարևոր մտերբի գեղեցիկ մի փունջ:

Եւստով դու կունենաս այս գրքի կրկնուց մասը և րոպէս քոյ կդնաս քո քննարած չափով գեղի Աստված:

Բարե երթ ինքնամարման ու Հոգևորի աշխարհուս Հանուցարհին:



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Քրիստոնեությունը Հիսուս Քրիստոսի հիմնադրած կրոնն է: Հիսուս Քրիստոսի հետևորդները կոչվում են *քրիստոնյաներ*:

Քրիստոնեական ուսմունքը կամ քրիստոնեական վարդապետությունը Հիսուս Քրիստոս ավանդեց՝ ուսուցանելով անձամբ, ապա ֆարգեցիին Քրիստոսի առաջյալները: Առաջյալները քրիստոնեական վարդապետությունը ավանդեցին՝ շրջելով և ֆարգելով տարբեր ժողովուրդների մեջ: Առաջյալների գործը շարունակեցին նրանց աշակերտները:

Քրիստոնեությունը մարդուց պահանջում է Աստուծոց պաշտել կենդանի ՀԱՎԱՏՔՈՎ, հաստատուն ՀՈՒՅՍՈՎ ու անկեղծ ՍԻՐՈՎ: Առ Աստված մարդու հավատքը, հույսն ու սերը պետք է դրսևորվեն նրա ամենօրյա աղոթքում ու բարի գործերում:

Յուրաքանչյուր քրիստոնյա պարտավոր է իմանալ «Հայր մեր» աղոթքը: Այն ավանդվել է մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից և այս պատճառով կոչվում է նաև Տերունական աղոթք: «Հայր մեր»-ը պետք է աղոթել ամեն օր, ամեն պահի, երբ հոգեկան համապատասխան մի պահանջ ունենի, հատկապես բնելուց առաջ և արթնանալուց հետո:

«Հայր մեր»-ը աղոթելուց առաջ նախ խաչակնում ենք. աջ ձեռքի բուր մատը, ցուցամատը և միջնամատը միացնում ենք իրար, որ խորհրդանշում է Սուրբ երրորդությունը, իրար միացած երեք մատները նախ կպում ենք նակառից՝ արտասանելով «Յանուն Հօր», ապա՝ կրճիին՝ «և Որդույ», ձախ լանջիին՝ «և Հոգույն», հետո՝ աջ լանջիին՝ «Սրբոյ», ապա «ամեն» ասելիս նույն ձեռքի բաց սափը հանգեցնում ենք կրճիին: Ամեն անգամ, երբ խաչ ենք հանում, արտահայտում ենք մեր երկյուղածությունը մեր Տիրոջ՝ Քրիստոսի խաչելության նկատմամբ և ընդունում ենք փրկությունը՝ խաչի միջոցով:

«Հայր մեր»-ը աղոթելիս ուրիշ ոչ մի բանի մասին չենք

մատածում: Այն կարելի է արտասանել ինչպես բարձրա-
ձայն, այնպես էլ՝ մտում:

Անա Տերունական աղոթքը.

Հայր մեր՝ որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն Քո,
Եկեացէ արքայութիւն Քո,
Եղիցին կամք Քո՝
Որպէս յերկինս և յերկրի:
Չհաց մեր Հանապազորդ
Տուր մեզ այսօր,
Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
Որպէս եւ մեք թողումք մերոց

պարտապանաց:

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա՛ զմեզ ի չարէն,
Զի Քո է արքայութիւն և զօրութիւն
Եւ փառք յաւիտեանս. ամէն*:

*
* *

Հայր մեր, որ երկնքում ես,
Թող սուրբ լինի Քո անունը,
Թող զա Քո արքայութիւնը,
Թող Քո կամքը լինի՝
Ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա:
Մեր Հանապազորչա Հացը
Տուր մեզ այսօր,
Եվ թող մեզ մեր պարտքերը,

* Գրաբարում կարգում ենք —

ա. բառակցում՝ Յ=Հ: Օրինակ՝ յաւիտեան=հավիտյան
բ. բառակցում՝ բաղաձայնից առաջ՝ Զ=ԼԶ: Օրինակ՝ զհաց=ըզհաց
գ. բառակցում՝ ձայնավորից առաջ՝ Զ=Ձ: Օրինակ՝ զի=զի
դ. Ի՛ի երկինչյունը՝ ՅՈՒ: Օրինակ՝ փորձութիւն=փորձություն
ե. եԱ երկինչյունը՝ ՅԱ: Օրինակ՝ յաւիտեան=հավիտյան
զ. բառավերջի ձայնավորից հետո յ-ց չի կարգացվում:
Օրինակ Աստուծոյ=Աստուծո:

Ինչպես որ մենք ենք թողնում մեր
պարտապաններին:

Եվ մեզ փորձության մի տար,
Այլ փրկիր մեզ չարից,
Որովհետև Քոնն է արքայությունը
և զօրությունը

Եվ փառք Հավիտյանս, ամեն:

Աղոթելիս ոչ բն պետք է առանց հասկանալու անցիկ
ասել, այլ հասկանալով ու հավատալով, որ Տեր Աստված
լսում է մեր աղոթքը և միշտ մեզ հետ է:

Առաջադրանք. գուրս գրել Աստվածաշնչից Մատթեոս Զ 14-15
համարները:



ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՐԱՐՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

(Ա)

Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը:
Երկիրն անձև ու գատարկ էր, խափար էր տիրում
անհունի վրա, և Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա:

Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ:
Աստված տեսավ, որ լույսը բարի է, և Աստված լույսը
բաժանեց խավարից:

Աստված լույսը կոչեց ցերեկ, իսկ խավարը կոչեց
գիշեր:

Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր առաջին:
Աստված ասաց. «Թող Հաստատություն առաջանա
ջրերի միջև, և ջրերը թող բաժանվեն ջրերից»: Եվ եղավ
այդպես:

Աստված ստեղծեց տարածություն, որով Աստված
տարածության ներքևում եղած ջրերը անջրպետեց
տարածության վերևում եղած ջրերից:

Աստված Հաստատությունը կոչեց երկինք: Աստված
տեսավ, որ լավ է:

Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր երկրորդ:
Աստված ասաց. «Թող երկնքի տակ գտնվող ջրերը
Հավաքվեն մի տեղ, և երևա ցամաքը»:

Եվ եղավ այդպես. երկնքի տակի ջրերը Հավաքվեցին
մի տեղ, ու երևաց ցամաքը:

Աստված ցամաքը կոչեց երկիր, իսկ ջրերի Համա-
տեղումը կոչեց ծով: Աստված տեսավ, որ լավ է:

Աստված ասաց. «Թող երկիրը իր տեսակի ու իր
նմանության սերմը պարունակող դալար բույս և իր
տեսակի ու իր նմանության սերմը պարունակող, իր
տեսակի մերկ տվող պտղաբեր ծառ աճեցնի երկիր վրա»:

Եվ եղավ այդպես. Հոգը ամբողջ երկրի վրա ցանկու-
սերմը իր մեջ պարունակող դալար բույս և իր տեսակի
սերմը իր մեջ պարունակող, մերկ տվող ծառ աճեցրեց:
Աստված տեսավ, որ լավ է:

Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր երրորդ:
Աստված ասաց. «Թող լուսատուներ լինեն երկնքի
տարածության՝ մեջ, որպեսզի լուսավորեն երկիրը և
իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը: Դրանք թող լինեն,
որպեսզի ցույց տան տարվա եղանակները, տոնական
օրերն ու տարիները, թող լինեն, ծագեն երկնքի տարա-
ծության մեջ՝ երկիրը լուսավորելու Համար: Եվ եղավ
այդպես:

Աստված ստեղծեց երկու մեծ լուսատուներ. մեծ
լուսատուն՝ ցերեկն իշխելու, իսկ փոքր լուսատուն՝ գիշերն
իշխելու Համար, ինչպես նաև աստղեր:

Աստված դրանք դրեց երկնքի տարածության մեջ՝
երկիրը լուսավորելու Համար, ինչպես նաև ցերեկն ու
գիշերը իշխելու և լույսն ու խավարը իրարից բաժանելու
Համար: Աստված տեսավ, որ լավ է:

Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր չորրորդ:

(ԾԱՆՈՒՅՑ Ա 1-19)



Ա. Ղ. ՈՒՔ

Աղորքը մարդու ի խորոց սրտի բխող խոսքն է Աստուծոյ, Աստուծոյ գիմեկու բանավոր մի ձև: Աբարչի: և արարածի միջև գոյություն ունեցող հոգեկան կապն է աղորքը: Աղորում ենք Աստուծո՛ւ՛ կյանքի հարատւութեան, մեղքերի բողոքւոյն, ստատպանքների ու փորձութւոյնների հաղթահարման, խաղաղութեան և ի վերջո՝ փրկութեան համար: Աղորում ենք մեր հարազատների, մտերիմների, բարեկամների ու ձեկերների, նաև մեր ազգի ու համայն մարդկութեան համար:

Աղորքը լինում է երկու տեսակ՝ ընդհանրական և ստանձնական:

Ընդհանրական կամ հասարակաց աղորքը կոչվում է պաշտամունք, երբ աղորում ենք հավատարար: Ընդհանրական աղորքներն են պատարագը և ժամերգութիւնները: Ընդհանրական աղորքները եկեղեցու հայրերի և եկեղեցական ժողովների կողմից կանոնականացված են և եստատոված հատուկ ձևի ու բովանդակութեան մեջ: Ընդհանրական աղորքները կատարվում են եկեղեցու սպասավորների՝ հոգևորականների կողմից՝ բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ ու մասնակցությամբ: Ընդհանրական է կոչվում ոչ միայն այն պատճառով, որ շատերն են ներկա լինում կամ մասնակցում, այլ նաև այն պատճառով, որ այս աղորքները համարվում են բոլոր հավատացյալների կողմից ու բոլոր հավատացյալների համար Աստուծոյ ուղղված աղորքներ:

Սակայն յուրաքանչյուր հավատացյալ բրիտոնյա պիտի չբավարարվի միայն ընդհանրական աղորքներով: Ցանկացած պահի մենք կարող ենք աղորել Աստուծոյ, լինի եկեղեցում, սակեր դպրոցում թե այլուր: Եվ Աստուծոյ կրի մեզ, եթե աղորենք մեր բարի, Աստուծոյ հանելի գործերի ու ցանկութւոյնների համար ոչ թե ի միջի այլոց կամ բերահավատութեամբ, այլ սրտի խորիքից և հաստատուն

հավատով: Այսպիսի աղորքները կոչվում են *ստանձնական աղորքներ*:

Ընդհանրական և ստանձնական աղորքները լինում են գոհարանական, փառարանական և խնդրական:

Փոռարանական են այն աղորքները, երբ մեր շնորհակալութեան ենք հայտնում Աստուծոյ՝ մեզ տրված Աստվածային բոլոր բարիքների ու պարգևների համար: Իսկ Աստվածային բարիքներ են այն բոլորը, ինչ գոյութւոյն ունի մեր շուրջը՝ տիեզերքը, լույսը, կյանքը, ամեն ինչ: Գոհութեան ենք հայտնում Աստուծոյ նաև մեզ շնորհած պարգևների, օգնութեան ու օրհնութեան համար:

Փառարանական են այն աղորքները, երբ փառարանում, փառք ենք տալիս Աստուծոյ՝ Իր բարութեան, արդարութեան և անբահման սիրո համար: Փառարանում ենք Աստուծոյ, որովհետև Աստված ստեղծել և պահում ու պահպանում է այն ամենը, ինչ որ գոյութւոյն ունի: Փառարանում ենք Աստուծոյ նաև այն պատճառով, որ Աստված Իր իմաստութեան շնորհիվ տալիս է մեզ աներաժշտ ամեն ինչ, որ բարի է ու գեղեցիկ:

Խնդրական են այն աղորքները, երբ Աստուծոյ խնդրում ենք մեր հավատքի մեջ հաստատուն մնալու կարողութեան, հույս, սեր, համբերութեան, առողջութեան և այլն:

Աղորել կարելի է բարձրաձայն, մտում՝ արտասանելով կամ երգելով:

Աղորելու ժամանակ կարելի է խաչակնել, ձեռքերի, ձեռքերը վեր բարձրացնել և այլն:

Առաջադրանք. գուրս գրել Աստվածաշնչից Մատթ. Զ 7-9 համարները:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ (Բ)

Աստված ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանության շունչ ունեցող գեոուններ և երկրի վրա, երկնքի Հաստատության մեջ թռչող թռչուններ»: Եվ եղավ այդպես:

Աստված ստեղծեց խոշոր կետեր, կենդանության շունչ ունեցող ամեն տեսակի գեոուններ, որ արտադրեցին ջրերն ըստ տեսակների, ամեն տեսակի թևավոր թռչուններ՝ ըստ տեսակների: Աստված տեսավ, որ լավ է:

Աստված օրհնեց դրանց ու ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք և լցրե՛ք ծովերի ջրերը, իսկ թռչունները թող բազմանան երկրի վրա»:

Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր Հինգերորդ:

Աստված ասաց. «Թող երկիրն արտադրի չորքտանի կենդանիներ իրենց տեսակներով, սողուններ և գազաններ իրենց տեսակներով»: Եվ եղավ այդպես:

Աստված ստեղծեց երկրի գազաններն իրենց տեսակներով, անասուններն իրենց տեսակներով և երկրի բոլոր սողուններն իրենց տեսակներով: Աստված տեսավ, որ դրանք լավ են:

Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»:

Եվ Աստված մարդ ստեղծեց իր նմանութամբ, Աստծու նմանութամբ ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց:

Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրա վրա, իշխեցե՛ք ծովի

ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»:

Աստված ավելացրեց. «Ահա ձեզ ավեցի ողջ երկրի վրա տարածված, սերմանելի բոլոր բույսերի սերմ և իրենց մեջ պտուղ սերմանելու սերմ պարունակող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ Համար սնունդ լինեն, իսկ բոլոր կանաչ խոտերը երկրի բոլոր գազանների, երկնքի բոլոր թռչունների և նրկրի վրա սողացող բոլոր սողունների՝ բոլոր կենդանիների Համար թող լինեն կեր»:

Եվ եղավ այդպես:

Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր վեցերորդ:

Այսպիսով Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը և կարգավորեց դրանք: Աստված վեցերորդ օրն ավարտեց արարչագործությունը և իր կատարած բոլոր գործերից Հետո՝ յոթերորդ օրը, Հանգստացավ:

(ՇՃՆդդ Ա 20-Բ 2)



ՀԱՎԱՏՔ

Հավատք կամ հավատալ նշանակում է ընդունել և խոստովանել նշմարիտ Աստծուն: Հավատալ Աստծուն, նշանակում է ընդունել նաև այն բոլոր նշմարտուրյունները, որոնք հայտնվել են Աստծու կողմից: Աստծու հայտնությունը և մեզ պարզեցած նշմարտուրյունների տեղը Մուրք Գիրքն ու Եկեղեցին է:

Մուրք Գիրքը կոչվում է Աստվածաշունչ, որովհետև գրվել է Աստվածային ներշնչանքով: Աստծու պատվիրանները բավական չէ միայն իմանալ, այլ պետք է հավատալ ու կատարել դրանք:

Հավատքը նշմարիտ ու կենդանի է, երբ Աստվածային պատվիրանները կատարում ենք մեր ամենօրյա կյանքում՝ Աստծու և մեր հավատակիցների հանդեպ:

Աստվածային նշմարտուրյունները հայտնվել են նաև մեծ սրբերին հետագայում՝ Աստվածաշունչ մատյանը գրվելուց հետո: Օրինակ՝ Մուրք Գրիգոր Լուսավորչին, Մուրք Մեսրոպ Մատոցին, Մուրք Գրիգոր Նարեկացուն և այլոց, որոնք և գրի են առել ու ավանդել հետագա սերունդներին:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Հովհաննես Ե 39, Առ Երբայեցիս ԺԱ 1, Առ Հռոմեացիս Ժ 17 համարները:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՂՈԹՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Եվ ես ասում եմ ձեզ, ուզեցե՛ք, և կարժի ձեզ, փնտրեցե՛ք, և կգտնեք, բախեցե՛ք, և կբացվի ձեզ Համար, որովհետև ով որ ուզում է՝ ստանում է, ով որ փնտրում է՝ գտնում է, և ով որ բախում է՝ բացվում է նրա առաջ: Ձեզանից ո՞վ է այն Հայրը, որի որդին եթե ձուկ ուզի, միթե ձկան փոխարեն ո՞՞ձ կտա նրան. և կամ ձու ուզի, միթե կարի՞՞՞՞՞ կտա նրան: Իսկ եթե զուբ, որ չար էք, զիտեք բարի պարզներ տալ ձեր որդիներին, որչա՞փ ևս առավել ձեր Հայրը երկնից բարիքներ կտա նրանց, ովքեր ուզում են իրենից»:

(Ղուկաս ԺԱ 9-13)



ՀԱՎԱՏՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Քրիստոնեական հավատքի գլխավոր դրույթներն են.

1. Գոյություն Աստծու:
2. Կատարելություն Աստծու:
3. Սուրբ Երրորդություն:
4. Արարչագործություն:
5. Նախախնամություն:
6. Մարդեղություն Աստծու:
7. Քրիստոսի եկեղեցի և եկեղեցու խորհուրդներ:
9. Նեշեցյալների հարություն:
10. Վերջին դատաստան:

1. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒ.

Հավատքը անհրաժեշտ է մարդուն, որպեսզի հաղորդակցվի Աստծու հետ և սիրի կյանքն ու ողջ արարչագործությունը, որ բարի է ու վեղեցիկ:

Աստու զոյության վերաբերյալ հավատքը բխում է մարդու հոգուց: Այս է պատճառը, որ Աստծու մասին ամբողջական պատկերացում չունեցողներն անգամ վտանգի պահին դիմում են Աստծու օգնությանը:

Ուստի՝ պարտադիր չէ Աստծուն տեսնել և նոր միայն հավատալ, որ Աստված կա: Ինչպես մենք չենք տեսել բազմաթիվ երկրներ, բայց հավատում ենք, որ նրանք կան, ինչպես չենք տեսնում հույսը, սերը, բարությունը, բայց գիտենք և վստահ ենք, որ նրանք կան, այնպես էլ հավատում ենք Աստծու զոյությանը:



ՔՐԻՍՏՈՐ ԸՆԴԱՍՆԵՐ. 1308 Ք.)

Ինչպես բազմաթիվ իրեր մարդկանց ձեռքի արդյունքն են, այնպես էլ աշխարհը Աստծու ստեղծագործության արդյունքն է: Աստծու ներկայությունը մենք կարող ենք տեսնել նյութի ամենապարզ մասնիկից սկսած մինչև համաստեղությունների ու ողջ տիեզերքի կատարելության մեջ: Աստծու գոյությունը կարող ենք տեսնել նաև նյութական աշխարհի յուրաքանչյուր մասնիկի ունեցած իմաստի մեջ, քանզի մեր շրջապատում ու ողջ տիեզերքում անիմաստ ոչինչ չկա: Իսկ բանականությունից զուրկ նյութին այդ իմաստը տրված է Արարիչ Աստծու կողմից:

Աստծու գոյության ապացույց է Աստվածորդու՝ Հիսուս Քրիստոսի մարդեղությունը, երկրային կյանքը, տված Աստվածային պատվիրանները, հարությունն ու համբարձումը:

Աստված է ստեղծել տիեզերքը և մարդուն և այն ամենը, ինչ գոյություն ունի:

2. ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՄՈՒ.

Աստված կատարյալ է Իր բարությանը ու սրբությանը, Նա անչափելի, անսահման ու անփոփոխելի է, ամենակարող, ամենագետ ու հավիտենական:

Քանի որ Աստված անսահման է, մենք չենք կարող ամբողջովին հանաչել Նրան, այլ զիտենք այնքանը միայն, ինչքան որ Աստված հայտնել է Իր մասին Աստվածաշնչում, իսկ հետագայում էլ՝ սրբերին: Սակայն այդ-հանը լիովին բավական է՝ հավատալու Աստծու գոյությանը և կատարելու Նրա պատվիրանները, որոնք տրված են մարդկանց՝ ճիշտ ապրելու համար:

Աստված կատարյալ է, ինչպես որ կատարյալ է Նրա ստեղծագործությունը (տիեզերք, բնություն, կենդանիներ և մարդ):

3. ՍՈՒՐԻ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ.

Սուրբ Երրորդությունը ասելով նկատի ունենք Աստվածային երեք անձնավորությունները՝ ՀԱՅՐՄԱՍՏՎԱԾ ՈՐԴԻ ԱՍՏՎԱԾ և ՀՈ՞՞Ի ԱՍՏՎԱԾ, որպես մեկ միասնություն, ինչպես Արև ասելով հասկանում ենք Արևի գունդը, լույսն ու ջերմությունը՝ երեքը միասին: Այս երեքից որևէ մեկի բացակայության դեպքում Արևը կղաղարի Արև լինելուց: Այդպես էլ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մեկ ընդհանուր միություն են կազմում Աստվածությանը: Սուրբ Հոգին մեկ ընդհանուր միություն են կազմում Աստված: Հայրը Արարիչն է, Որդին՝ Փրկիչը, Սուրբ Հոգին՝ Մխիթարիչն ու շնորհներ բաշխողը:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Առ Տիտոս Բ 11-12-ի համարները:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱՄԵՄ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Իսկ փարիսեցիները երբ լսեցին, թե նա պապանձեցրեց աղուկեցիներին, ի մի հավաքվեցին, և նրանցից մեկը Արամ փորձելով՝ հարցրեց ու սասց. «Վարդապետ, թրե՞սքի մեջ ո՞ր պատվիրանն է մեծ»: Եվ Հիսուս նրան սասց. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծը և առաջին պատվիրանը: Եվ երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը: Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը և Մարգարեները»:

(Մատթ. ԻԲ 34-40)



4. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.

Աստծու ստեղծագործ կարողությունը կոչվում է արարչագործություն: Աստված արարչագործությամբ ստեղծեց ինչ որ գոյություն ունի մեր շուրջը՝ երկինք և օրհորհները: Աստծու ճշմարտությունը և մարդ արարածը: Արարչագործության առաջին օրվանից սկսած Աստված որոշեց իր ստեղծագործության յուրաքանչյուր անդամ ստեղծելու համար, յուրաքանչյուրի նշանակությունը: Աստվածային օրհնեցներով է ղեկավարվում ամեն ինչ: Արարչագործության բազմ ու պսակը մարդն է հանդիսանում, քանի որ Աստված մարդուն օժտեց բանաստեղծությամբ, ազատ կամքով ու տվեց նրան իր շունչը: Այդ իմաստով՝ մարդ արարածը Աստվածանման է:

Աստված սիրում ու պահպանում է իր ստեղծագործությունը՝ պատվիրելով չշեղվել իր օրհնեցներից ու պատվիրաններից:

5. ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ.

Աստծու սերն ու խնամքը իր ստեղծագործության հանդեպ կոչվում է Աստվածային նախախնամություն: Նախախնամություն ասելով հասկանում ենք Աստծու ստեղծագործության օրհնությունները, որոնք ստեղծվում են բոլորից առատապես, ձրիորեն, տակավին չխնդրած: Արևն իր լույսը բաշխում է բոլորին հավասարապես, չեն խախտվում բնության օրհնաչափությունները: Այս բոլորը Աստվածային նախախնամության արտահայտությունն են հանդիսանում:

6. ՄԱՐԳԻԵՂՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒ.

Աստծու մարդեղությունը ասելով հասկանում ենք Որդի Աստծու՝ Հիսուս Քրիստոսի մարդանայր:

Հայր Աստծու էություններից է Որդին և ոչ քի Հայր Աստծու կողմից ստեղծված: Նա ունի Հայր Աստծու բոլոր օրհորհները: Աստծու Որդին՝ Աստվածորդին, կամ նույն ժամանակահատվածում՝ Հիսուս Քրիստոս, Մարիամ Աստվածածնի միջոցով Մարիին ստացավ և դարձավ կատարյալ մարդ՝ շարունակելով մնալ կատարյալ Աստված: Նա իշավ երկիր ստեղծելու համար և ապրեց որպես կատարյալ մարդ: Նա մեղ է չգործեց, այլ իր յոյց տվեց մարդկանց, քի ինչպես կարելի է ապրել մարդկային առանց մեղքերի: Իշավ երկիր, որպեսզի մենք իրավենք Նրա հարությանը: Այս պատճառով էլ Հիսուս Քրիստոս կոչվեց Փրկիչ:

Հիսուս Քրիստոսի՝ Փրկչի ծննդյան մասին վկայել էին մարգարեները Նրա ծնունդից դարձր առաջ, և Հիսուս մարդեղացավ՝ հաստատելու համար Աստվածային ճշմարտությունը:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Հովհ. Գ 24 համարը:





7. ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Քրիստոսի եկեղեցին Քրիստոսին հավատացող մարդկանց ընդհանրությունն է: Եկեղեցի է կոչվում նաև այն կառույցը, շենքը, ուր հավաքվում են հավատացյալները աղոթելու և արարողություններ կատարելու համար: Այսպիսով, Քրիստոսի եկեղեցին բոլոր քրիստոնյաների միությունն է:

Քրիստոսի եկեղեցին կոչվում է Մեկ, Ընդհանրական, Առաջնական և Սուրբ եկեղեցի: Մեկ է կոչվում, որովհետև բոլոր քրիստոնյաները մեկ հավատ ունեն և մեկ Աստված: Քրիստոսի եկեղեցին նաև Ընդհանրական է, որովհետև ամբողջ աշխարհի վրա սփռված քրիստոնյաները կազմում են Մեկ եկեղեցի: Եվ քանի որ այդ եկեղեցին կազմավորվեց առաջնական քրիստոնյաների շնորհիվ և չի շեղվել առաջնական ավանդած ճշմարտ հավատից, դրա համար էլ կոչվում է նաև Առաջնական: Մեկ, Ընդհանրական և Առաջնական եկեղեցին Սուրբ է կոչվում, որովհետև եկեղեցին խորհրդանշում է Քրիստոսի ներկայությունը մարդկանց մեջ:

Սակայն հիմա Քրիստոսի եկեղեցին ունի մի քանի ճյուղավորումներ, ինչպես, օրինակ, Հռոմեական կաթոլիկ, Օրթոդոքս և Քողոզական եկեղեցիները: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր հատուկ դավանաբանական ըմբռնումները, ազգային և եկեղեցական ավանդություններն ու սովորությունները:

Հայ Առաջնական եկեղեցին աշխարհի հնագույն եկեղեցիներից է: Այն անփոփոխ է պահել առաջնական քրիստոնյաների հավատը և առաջին երեք Տիեզերական ժողովների որոշումները:

Եկեղեցու խորհուրդները յոթն են.

1. Մկրտություն:
2. Դրոշմ:
3. Ապաշխարություն:
4. Հաղորդություն:
5. Պսակ ամուսնության:

6. Կարգ ձեռնադրության:

7. Կարգ հիվանդաց կամ վերջին օծում:

Եկեղեցու այս յոթ խորհուրդներին կանոնադառնանք հետագայում: Այժմ իմանանք միայն, որ խորհուրդ բառը կրոնական իմաստով ճշմանկում է հայտնություն: Խորհուրդները կատարվում են արարողությունների միջոցով (մկրտության արարողություն, դրոշմի արարողություն և այլն), որոնք ոչ թե սովորական արարողություններ են, այլ իրենց մեջ Աստվածային խորհուրդ են պարունակում:

8. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ.

Աստվածային շնորհները մարդուն տրված Աստծու պարգևներն են: Աստվածային շնորհները մենք ստանում ենք հատկապես եկեղեցու խորհուրդների միջոցով: Աստված յուրաքանչյուր մարդու պարգևում է մեղքերից մաքրություն, բարություն, ճշմարիտ ու գեղեցիկ ընկալելու հնարավորություն և այլն: Խորհուրդների ու հավատի շնորհիվ է, որ մարդը դառնում է Հիսուսի հետևորդը, որդեգրվում Նրա կողմից և դառնում եկեղեցու հարազատ գավաթ:

Երբ լիակատար կերպով հավատում ենք Աստծուն, Նա ցույց է տալիս ճիշտ ապրելու ճանապարհը: Ոչ մի մարդ իրող չի ծնվում: Աստվածային կամի համաձայն և խորհուրդների միջոցով յուրաքանչյուր մարդու տրվում են Աստվածային շնորհներ, որպեսզի իր քաղցր գործերով գեղեցկացնի կյանքը, մեղք չգործի և արժանանա հոգեկան փրկության: Սակայն երբ մեր կամով մեղք ենք գործում, չար գործեր կատարում, զրկվում ենք Աստծու տված շնորհներից:

Աստվածային շնորհներ են հավատը, հույսը, սերը, փրկությունը, բարությունը, իմաստությունը, գիտությունը, հրաշագործությունը և այլն:

Առաջագրանք. դուրս գրել Աստվածաշնչից Հովի. Ա. 18 համարը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՏՈՂԵՐ ԱՍՏՎԱԽԱՇՆՉԻՑ

Ընկերողդ դեմ չարություն մի տածիր, քանի որ նա վատահում է քեզ:

(Առակ. Գ 7)

Որևէ մեկի Հեա զուր տեղը մի վիճիր, եթե նա քեզ վատություն չի արել:

(Առակ. Գ 30)

Եթե դուք մարդկանց ներքեք իրենց Հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կհերի:

(Մատթ. Զ 14)

Եվ ամեն ինչ, որ ուզեք ազոթքի մեջ Հավատով, կատանաք:

(Մատթ. ԻԱ 22)

ԱՀավասիկ ես ձեզ Հեա եմ մինչև շախարհի վերջը:

(Մատթ. ԻԸ 20)

Կատարյալ եղեք դուք, ինչպես և ձեր երկնավոր Հայրն է կատարյալ:

(Մատթ. Ե 48)

ԱՀա պատվիրում եմ քեզ. զորացիր և քաջ եղիր, մի տգիտացիր և մի՛ երկնչիր, որովհետև ամենուր քեզ Հեա է քո Տեր Աստվածը՝ ուր էլ որ գնաս:

(Հեաու, Ա 9)

Թող եղբայրասիրությունը Հաստատ մնա ձեր մեջ:

(Եբր. ԺԳ 1)

Ամեն ինչ քեզ կարելի է, բայց ամեն բան չէ, որ օգուտ է:

(Ա. Կորնթ. Ժ 23)

9. ՆՆՋԵՑՑԱԼ ՆՆՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.

Մարդ ունի մարմին և հոգի: Մարմինը տեսանելի է, իսկ հոգին՝ անտեսանելի: Մարդուն հոգի տրվում է Աստծու կողմից: Հոգին է, որ սիրում է, ուրախանում, հրեվում՝ բարի գործեր կատարելիս, գմայլվում գեղեցիկ տեսարաններով ու երաժշտությամբ, մարդուն մղում առափնուրյունների և այլն: Մարդու մարմինը մահանում է, երբ հոգին անջատվում է նրանից: Հոգին անմահ է: Ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսն է խոստացել, գալու է ժամանակը, երբ բոլոր մահացածները հարուրյուն են անոնելու: Այն մարդիկ, ովքեր Աստծու հանդեպ հավատք են ունեցել, եղել են արդար, կատարել են բարի գործեր և պահել Հիսուսի պատվիրանները, այլևս երբեք չեն մահանալու, այլ շարունակելու են ապրել Հիսուսի հետ: Իսկ մեղավորները պատժվելու են հավիտենապես:


10. ՎԵՐՋԻՆ ԳԱՏԱՍՍԱՆ.

Վերջին դատաստանը մեր Տեր Հիսուս Քրիստոսի արդար դատաստանն է, երբ նա երկրորդ անգամ գալու է՝ յուրաքանչյուր մարդուն իր գործի համապատասխան հատուցելու: Իրենց կյանքն արդարությամբ ապրած մարդիկ ժառանգելու են Աստծու Արքայությունը և շարունակելու են ապրել հավիտենապես՝ Աստծու հետ: Իսկ մեղավորները և չարագործները արժանանալու են դատապարտության: Աստված մարդկանց չի ասել, բե երբ է լինելու երկրորդ գալուստը և դատաստանը: Այն հայտնի է միայն Աստծուն:

Այսպիսով, ամփոփենք վերջին չորս կետերը. Քրիստոսի նկեղեցին Քրիստոսին հավատացողների ընդհանրությունն է: Եկեղեցի է կոչվում նաև այն կառույցը, ուր հավաքվում են հավատացյալները՝ աղոթելու և խորհրդակատարություններ անելու: Քրիստոսի նկեղեցին կոչվում է Մեկ,

Ընդհանրական, Առաքելական և Սուրբ Եկեղեցի:
Քրիստոսի Եկեղեցին ժամանակի ընթացքում տարբեր
նյութերի է բաժանվել, սակայն նրանց բոլորի հավատքի
հիմք Հիսուս Քրիստոսն ու Աստվածաշունչն է:
Աստվածային շնորհները տրվում են Եկեղեցու խոր-
հուրդների միջոցով: Քրիստոսի երկրորդ գալուստի
ժամանակ բոլոր մահացածները հարուժուց կառնեն և
տեղի կունենա վերջին դատաստանը. արդարները
հավերժորեն կպայքեն Աստծու հետ, իսկ մեղավորները
կենթարկվեն դատապարտության ու պատժի:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից. Հովհ. Գ 31, եփես. Գ
16, Գաղ. Գ 27-28, Եբր. ԺԱ 6 համարները:



ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄՒՈՒԹՅԱՆ ԿՈՉ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Ամենայն խոնարհությունք և հեզուժյամք և Համբե-
րուժյամք անսացեք միմյանց սիրով, ջանացեք պահել
Հոգու միությունը խաղաղության կապով. մեկ մարմինն և
մեկ Հոգի, ինչպես որ կանչվեցիք ձեր կոչման միակ
Հույսին: Մեկ Տեր կա, մեկ Հավատ, մեկ մկրտություն,
մեկ Աստված, Հայր բոլորի, որ է բոլորից վեր, բոլորի
միջով և մեր բոլորի մեջ: Բայց մեզնից յուրաքանչյուրին
տրված է շնորհ ըստ Քրիստոսի պարգևի չափի, որի Հա-
մար էլ ասում է. «Ելավ բարձունքը, գերինների բազմու-
թյուն գերեզմարեց և մարդկանց պարգևներ տվեց»:
«Ելավ»-ն ի՞նչ է, եթե ոչ այն, որ իջավ նախ երկրի
ստորին կողմը, Նա, որ իջավ, նույն ինքն է, որ ելավ
ավելի վեր, քան բոլոր երկինքները, որպեսզի լցնի ամեն
բան: Նա շնորհ տվեց ոմանց՝ լինելու առաքյալներ,
ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝
Հովիվներ և վարդապետներ՝ ի Հաստատումն սրբերի, ի
կատարումն պաշտոնի, ի շինություն Քրիստոսի մարմնի
(Եկեղեցու), մինչև որ մենք բոլորս Հասնենք Հավատի մեկ
միություն և Աստծու Որդու ճանաչմանը, կատարյալ տար-
դու աստիճանին՝ Քրիստոսի կատարելության Հասակի
չափով: Այնպես որ, այսուհետև չլինենք երեսաներ,
որոնք տարուբերվում ու քշվում են վարդապետության
բոլոր Հոգմերից, մարդկանց խաբեությունք, մոլոր խա-
բեություն խորամանկությունք, այլ, ճշմարտությունք
ընթանալով սիրո մեջ, ամեն բան անեցնենք նրա մեջ, որ
չլուխն է՝ Քրիստոս: Նրանից է ամբողջ մարմինը,
միացած և Հարմարված ամեն Հոգի օգնությունք, ամեն մի
մասի ներգործությունք չափով, իր աճումն է առաջ
տանում ի շինություն իր անձի, սիրո մեջ:

(Եփես. Գ 2-16)

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ

«Հավատո Հանգանակը» Քրիստոնեական հավատքի հիմքն ու քանաձևն է: «Հավատո Հանգանակը» կոչվում է նաև «Հավատամիջ», որ «Հավատո Հանգանակի» առաջին քառն է և նշանակում է «հավատում եմք»:

Հանգանակ քառացիորեն նշանակում է ամփոփում: Այսինքն, Հավատո Հանգանակ նշանակում է հավատքի հիմնական կետերի համատեղումը:

Առաջին Հավատո հանգանակը կազմվել է առաջալուսների կողմից և կոչվում է Առաքելական հանգանակ: Առաքելական հանգանակի հիմքը Հիսուսի «Յանուն Հօր եւ Որդւյն եւ Հոգւոյն Սրբոյ» բանաձևն է, որ բարգմանվում է՝ «Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունից»: Առաքելական Հանգանակի հիման վրա էլ 325 թվականին կազմվեց Նիկիական Հանգանակը՝ Նիկիայում գումարված առաջին Տիեզերական ժողովի ժամանակ:

Առաջին Տիեզերական ժողովին մասնակցել է Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակես հայրապետը:

381 թվականին Կոստանդնուպոլսում գումարվում է երկրորդ Տիեզերական ժողովը: Ժողովում Նիկիական Հանգանակի վրա ավելացվում է Սուրբ Հոգու վերաբերյալ հատվածը: Ավանդաբար երկրորդ Տիեզերական ժողովին մասնակցել է Ներսես Մեծ հայրապետը:

Հայ եկեղեցին ընդունել է նաև վերջին՝ երրորդ Տիեզերական ժողովի որոշումները: Երրորդ Տիեզերական ժողովը գումարվել է 431 թվականին՝ Եփեսոսում:

Նիկիական Հանգանակի ու Կոստանդնուպոլսի ընդունած բանաձևի հիման վրա կազմվել է մեր եկեղեցու Հավատո Հանգանակը: Մեր սուրբ նախնիները Նիկիական Հանգանակի վրա ավելացրել են մի քանի խորիմաստ, աստվածաբանական մտեր ու կարևոր քառեր, որոնք ավելի են պարզաբանում Հավատո Հանգանակը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու Հավատո Հանգանակը պետք է անգիր իմանալ. այնտեղ ասված ճշմարտությունները մեր քրիստոնեական հավատքի հիմքն են հանդիսանում:

Հավատամքն արտասանելիս երկու ձեռքերի ակներք կպում են իրար և պահում կրծքավանդակի մոտ: Հավատամքի ավարտին խաչակնգում եմք:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Մատթ. Ե 13-16 համարները:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հաճատամք ի մի Աստուած ի Հայրն Ամենակալ,
Յարարիչն երկնի և երկրի, երևելանց և աներևութից:
Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ,
Մենալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին,

այսինքն յեութենէ Հօր:

Աստուած Աստուծոյ, յոյս ի լուսոյ,

Աստուած Ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝

ծնունդ և ո՛չ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր,

Որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի,

երևելիք և աներևույթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան

իջնալ ի յերկնից՝

Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս

ի Մարիամայ Արքայ Կուսէն Հոգւով Սրբով:

Որով էառ զմարմին, զՀոգի և զմիտ.

Եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝

ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ,

յիբրորդ առւեր յարուցեալ,

ելեալ ի յերկինս նովին մարմնովն,

նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝

ի դատել զկենդանիս և զմեռեալս,

Որոյ թագաւորութեանն ոչ զոյ վախճան:

Հաճատամք և ի Սուրբ Հոգին.

յաննդն և ի կատարեալն,



Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆԾ - ԱՎԵՏՈՒՄ (1900 թ.)

Որ խոսեցաւ զօրէնս և ի մարգարէս և յաւենասրանս :
 Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքելսն
 և բնակեցաւ ի սուրբան :
 Հաւատամք և ի Միմիայն Ընդհանրական
 և յԱռաքելական Սուրբ Եկեղեցի,
 ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն
 և ի թողութիւն մեղաց :
 ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից՝
 Հոգւոց և մարմնոց,
 Եւրօթալութիւնն երկնից, և ի կեանսն յաւիտենականս :

*
 * *

Հավատում ենք մեկ Աստուծո՝ ամենակալ Հորը,
 երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին :
 Եւ մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստուծու Որդուն՝
 Մնոված Հայր Աստուծոց՝ Միածին,
 ախինքն՝ Հոր հույժյունից :
 Աստոված՝ Աստուծոց, լույս՝ լույսից,
 Ճշմարիտ Աստոված՝ ճշմարիտ Աստուծոց,
 ծնունդ և ոչ արարած :
 Նույն ինքը Հոր բնությունից,
 Որով եղավ ամեն ինչ երկնքում և երկրի վրա՝
 երևելիներ և աներևույթներ :
 (Նա), որ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության
 համար, երկնքից իջնելով՝
 Մարմնացավ, մարդացավ, Սուրբ Հոգով կատարելապես
 ծնվեց Սուրբ Կույս Մարիամից :
 Որի միջոցով առավ մարմին, Հոգի և միտք,
 Եւ այն ամենը, ինչ կա մարդու մեջ՝
 ճշմարտապես և ոչ կարծյոր :
 Չարչարվեց, խաչվեց, թաղվեց,
 երբորդ օրը Հարություն առավ,
 Նույն մարմնով երկինք ելավ,
 նստեց Հոր աջ կողմում :

կգա նույն մարմնով և Հոր փառքով՝
Գատելու կենդանիներին և մեռածներին.
Նրա թագավորութունը վախճան չունի:
Հավատում ենք և Սուրբ Հոգուն՝

անեղին և կատարյալին,
Որ խոսեց օրենքի և մարգարեների (գրքերում)
և ավետարաններում,
Որն իջավ Հորդանան, քարոզեց առաքյալներին
և բնակվեց սուրբերի մեջ:
Հավատում ենք և մեկ ու միակ Ընդհանրական
և Առաքելական Սուրբ Եկեղեցուն,
Մեկ մկրտության, ապաշխարության, քավությանն
ու մեղքերի թողությանը,
Մեռելիների Հարության, Հոգիների՝ մարմինների
Հավիտենական դատաստանին,
Նրկնքի արքայության և Հավիտենական կյանքին:



ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁ ՄԱՏՅԱՆԸ

Նախորդ դասերից մեեմ արդեն գիտեմք, որ Աստվածային նշմարութունները գրի են առնված Աստվածաշունչ մատյանում: Աստվածաշունչ մատյանը կամ ուղղակի Աստվածաշունչը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը կոչվում է Հին Կտակարան, իսկ երկրորդը՝ Նոր Կտակարան:

Կտակարան նշանակում է Աստծու կտակը՝ ուխտը և պատգամների ամբողջությունը:

Հին Կտակարանը գրել են մարգարեներն ու Աստվածային ներշնչանք ունեցող մարդիկ, իսկ Նոր Կտակարանը՝ Քրիստոսի առաքյալներն ու նրանց աշակերտները:

Մարգարեն այն սուրբ անձնավորությունն էր, որի միջոցով Աստված մարդկանց հայտնում էր Աստվածային նշմարութունները: Հին Կտակարանը բաղկացած է 39 գրքերից, իսկ Նոր Կտակարանը՝ 27:

Հին Կտակարանի առաջին հինգ գրքերը միասին կոչվում են Հնգամատյան, ուր գրված են նաև Մովսես մարգարեի միջոցով տրված Աստվածային պատվիրանները:

Հին Կտակարանում կան նաև պատմական գրքեր. այստեղ հրեա ժողովրդի օրինակով ցույց է տրված, թե Աստծուն պետք է հավատալ ու կատարել նրա պատվիրանները:

Նոր Կտակարանի 27 գրքերից առաջին չորսը կոչվում են Ավետարաններ, յուրաքանչյուրն ըստ հեղինակի անվան՝ Մատթեոսի Ավետարան, Մարկոսի Ավետարան, Ղուկասի Ավետարան և Հովհաննեսի Ավետարան: Ավետարաններից հետո Նոր Կտակարանի հաջորդ գիրքը կոչվում է «Գործք Առաքելաց», որ Քրիստոսի առաքյալների և նրանց կատարած գործերի պատմությունն է: «Գործք Առաքելացից» հաջորդում են առաքյալների գրած 22

բղթերը (նամակները)՝ ուղղված հավատացյալներին, իսկ վերջին գիրքը կոչվում է «Հայտնություն Հովհաննու», որտեղ հիմնականում խոսվում է վերջին դատաստանի մասին:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Հակոբոս Բ 26, Հովհ. 9
39-40 համարները:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՈՂՋԱՄԻՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒՄԸ

Այս եմ վկայել տալիս Աստծու և Հիսուս Քրիստոսի առաջ, որ դառելու է կենդանիներին և մեռածներին՝ իր Հայտնության և արքայության մեջ: Եվ դու քարոզի՛ր խոսքը, շարունակ՝ Հայտարարիք այն, ժամանակին լինի, թե տարածամ, Հանդիմանի՛ր, սաստի՛ր, Հորդորի՛ր ամենայն Համբերատարությանը և ուսուցանելով, քանզի պիտի գա ժամանակ, երբ չպիտի անսան ողջամիտ վարդապետությանը, այլ, յուրաքանչյուրն ըստ իր ցանկության և ներքինի, վարդապետներ պիտի կուտակի իր շուրջը՝ իր ականջներին Հանելի բաներ լսելու մարմաջով: Եվ նրանք ականջները պիտի դարձնեն ճշմարտությունից ու պիտի մոլորվեն՝ ընկնեն առասպելների մեջ: Իսկ դու արթնո՛ւն եղի՛ր ամեն ինչում, ճգնի՛ր, ավետարանչի գործե՛ր արա, լիուրի կատարի՛ր քո պաշտոնը:

(Բ Տիմոթ. Դ 1-5)



A decorative rectangular border with intricate floral and scrollwork patterns, featuring four ornate corner designs and repeating motifs along the sides.

ՄԵՐ ՏԻՐՈՋ
ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիսուս Քրիստոսի մասին հիմնականում պատմում են յոթ Ավետարանները:

Աստվածորդին ի սկզբանե գոյություն ուներ Հայր Աստծու հետ: Բայց երբ ժամանակը եկավ, Նա Հայր Աստծու և Իր կամքով և ներգործությամբ Սուրբ Հոգու ծնվից Մարիամ Աստվածածնից, այսինքն՝ մարմնացավ, մարդացավ, եկավ աշխարհ, որպեսզի Իր կյանքով ու Իր օրինակով ցույց տա մարդկանց արգար ազրելու համար: Հիսուսի մայրը՝ Մարիամ Աստվածածինը, սրբուհուրը հավատացյալ կին էր, որից և, Աստվածային նախախնամությամբ, ծնվից Հիսուս Քրիստոս՝ Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում:

Հիսուսի ծնվելուց ֆիչ տաաշ Հովսեփն ամուսնացավ Մարիամի հետ: Հովսեփին Աստծու հրեշտակի կողմից տեղյակ էր պահվել Հիսուսի ծննդյան մասին:

Հրեաստանն այդ ժամանակ գտնվում էր հռոմեացիների իշխանության տակ: Հիսուսը ծննդյան օրը մտնելի էր, և կայսրի կողմից հրաման եղավ, որ բոլորը ներկայանան մարդահամարի: Հովսեփը և Մարիամը նույնպես գնացին: Նրանք ուշ հրեկոյան հասան Բեթղեհեմ, ուր տեղի էր ունենում այդ շրջանի բնակիչների մարդահամարը: Եվ որովհետև նրանք տեղ չգտան գիշերելու, գիշերը մնացին մի գոմում: Այդտեղ, պարզ ու հասարակ մտքում էլ ծնվից Հիսուս: Երբ Հրեաստանի բազմաթիվ Հերովդեսը իմացավ Հիսուսի ծննդյան մասին, ցանկացավ սպանել Նրան, որովհետև լուր տարածվից, թե նորածին Հիսուսը լինելու է Հրեաստանի բազմաթիվ: Բայց Աստծու հրեշտակը Հերովդեսի չար մտադրությունը հայտնից Հովսեփին ու Մարիամին, և նրանք, Հիսուսին վերցնելով,

գնացին Եգիպտոս: Չիմանալով նրանց փախուստի մասին
Հերովդեսը հրամայեց սպանել Բեթղեհեմում ու նրա
շրջակայքում եղող երկու տարեկանից փոքր բոլոր երեխա
ներին, մտածելով, թե դրանցից մեկն էլ Հիսուս կլինի:

Հերովդեսի մահից հետո Հովսեփն ու Մարիամ
Հիսուսի հետ վերադարձան Հրեաստան և բնակվեցին Նա
զարեթ ֆաղաֆում, որի համար էլ Հիսուս Քրիստոս կոչվե
լիստես Նազովրեցի:

Հիսուսի մանկությունն անցավ սովորական կերպով
Բայց Նա աչքի էր բնկնում Իր Աստվածային իմացա
կանությունը, նույնիսկ երես ֆահանայապետերին առի
եղած դեպքում բացատրում էր, թե ինչպես պետք է
հասկանալ Աստվածային պատվիրանները:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Ղուկաս Բ 52, Գործք
37 համարները:




ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՁԻ ՎԵՐՋԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Մարդ իրենից որևէ բան անել չի կարող, եթե նրան ի
վերուստ՝ երկնքից այդ տրված չէ: Դուք ինքներդ եք
վկայում ինձ, որ ձեզ ասացի. ես Քրիստոսը չեմ, այլ
ուղարկված եմ Նրա առաջից: Ով Հարս ունի, նա՛ է
փեսան, իսկ փեսայի բարեկամը, որ կանգնած լսում է
նրան, մեծապես ուրախանում է փեսայի ձայնի Համար:
Արդ, այս ուրախությունը, որն իմն է, կատարյալ է: Պետք
է, որ Նա աճի, իսկ ես՝ նվազեմ:

Նա, որ ի վերուստ է գալիս, վեր է ամենքից: Նա, որ
այս երկրից է, երկրավոր է և երկրավորից է խոսում: Նա,
որ երկնքից է գալիս, վկայում է, ինչ որ տեսել ու լսել է,
սակայն Նրա վկայությունը ոչ ոք չի ընդունում: Ով
ընդունում է Նրա վկայությունը, Հաստատած կլինի, որ
Աստված ճշմարիտ է, քանի որ Նա, ում Աստված
ուղարկեց, Աստծու խոսքերն է խոսում, որովհետև
Աստված Հոգին չափով չէ, որ ալիս է: Հայրը սիրում է
Որդուն, և ամեն ինչ տվել է Նրա ձեռքը: Ով Հավատում է
Որդուն, ընդունում է Հավիտենական կյանքը, իսկ ով չի
Հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ նրա վրա
կմնա Աստծու բարկությունը»:

(Հովհ. Գ 27-36)



ՀԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Հիսուս 30 տարեկան էր, գնաց Հարդանան գետը, ուր մկրտուբյուն էր անում Հովհաննես Մկրտիչը՝ մարդկանց հորդորելով ապաշխարել, հեռանալ մեղքերից և պատրաստվել պիմավորելու Տիրուջը: Երբ Հովհաննես Մկրտիչը հեռվից տեսավ մտոնցող Քրիստոսին, ասաց. «Նա պետք է Քեզնից մկրտվիմ, բայց Դո՞ւ ես ինձ մտազալիս»: Նա այսպես ասաց, որովհետև նա նախքան Աստվածորդուն՝ Հիսուսին: Բայց Հիսուս պատասխանեց, թե անհրաժեշտ է կատարել ամեն ինչ, ինչ որ կանխագուշակված է նախօրոք և ինչպես որ կարգն է: Եվ Հովհաննես Մկրտիչը Հարդանան գետում մկրտեց Հիսուսին:

Հիսուսի մկրտության ժամանակ երկնից լսվեց Հայր Աստծու ձայնը, որ ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին, որ ունի իմ ամբողջ հաճութունը» (հաճություն նշանակում է համաձայնություն, հոժարություն): Իսկ Սուրբ Հոգին աղավանկերով իջավ նրա վրա:

Առաջագրանք դուրս գրել Աստվածաշնչից Հովհ. Գ 5 համարը:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Այն ժամանակ Հիսուս Գալիլեայից Հարդանան եկավ, Հովհաննեսի մոտ՝ նրանից մկրտվելու: Իսկ Հովհաննեսը արգելեց նրան ու ասաց. «Ի՞նձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, և Դու ի՞նձ մտազալիս»: Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Թո՞ւյլ տուր Հիմա, որովհետև այսպես վայել է, որ մենք լրացնենք ամեն արդարություն»: Եվ ապա նրան թույլ տվեց: Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս ելավ. և ահա երկինքը բացվեց նրան, և նա տեսավ Աստծու Հոգին, որն իջնում էր ինչպես աղավանի և գալիս էր իր վրա: Եվ ահա՝ իի ձայն երկնքից, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ Հաճութունը»:

(Մատթ. Գ 13-17)



ՀԻՍՈՒՍԻ ՔԱՐՈՉԶՈՒԹՅՈՒՆԸ

Մկրտությունից հետո Հիսուս Քրիստոս ֆառատուն օր հեռացավ մարդկանցից և ապրեց անապատում: Անապատում նա ոչինչ չկերավ և հաղթահարեց բոլոր տեսակի դժվարություններն ու փորձությունները: Ապա նորից վերադարձավ մարդկանց մեջ և սկսեց ֆարոգել ու սովորեցնել, որ պետք է հավատալ ու սիրել Աստծուն, արդար կյանքով ապրել և սիրել միմյանց: Նա ֆարոգում էր մարդկանց հավիտեանական կյանքի ու երկնքի արքայության մասին, որ նրանք կարժանանան Աստծուն տեսնելու շնորհիցն ու փրկությամբ: Նա ֆարոգում էր ամենուրեք և անդադար սովորեցնում:

Ահա Հիսուսի ֆարոգչությունից երկու հատված.

«Եթե դուք ներքե մարդկանց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք չներքե մարդկանց հանցանքները, ձեր Հայրն էլ չի ների ձեր հանցանքները» (Մատթ. Զ 14-15):

«Այն ամենը, ինչ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» (Մատթ. է 12):

Այս և այլ բազմաթիվ Աստվածային ճշմարտություններ էր սովորեցնում ու ֆարոգում Հիսուս և իր կյանքի օրինակով ցույց տալիս արդար ապրելու ճանապարհը:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Մարկ. Ա 15, Դուկ. Զ 43-45 համարները:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՃՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ

«Եթե ինձ սիրում եք, կպահեք իմ պատվիրանները. և ես պիտի աղաչեմ Հորը, և նա մի-այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի Հավիտյան ձեզ հետ բնակվի. ձյմարտության Հոգին, որին այս աշխարհը չի կարող ընդունել, որովհետև նրան չի տեսնում և նրան չի ճանաչում, բայց դուք ճանաչում եք նրան, որովհետև ձեզ մոտ պիտի բնակվի և ձեր մեջ պիտի լինի: Ձեզ որք չեմ թողնի, կգամ ձեզ մոտ: Մի փոքր ժամանակ ևս, և այս աշխարհը ինձ չի տեսնի, բայց դուք ինձ կտեսնեք, որովհետև ես կենդանի եմ, և դուք կենդանի եք լինելու: Այն օրը դուք պիտի իմանաք, որ ես իմ Հոր մեջ եմ, և դուք իմ մեջ. ու ես՝ ձեր մեջ: Ով իմ պատվիրաններն ունի և զրանք պահում է, նա՛ է, որ ինձ սիրում է. և ով ինձ սիրում է, պիտի սիրվի իմ Հորից. ես էլ նրան պիտի սիրեմ և ինձ պիտի Հայտնեմ նրան»:

(Հովհ. ԺԴ 15-21)




ՀԻՍՈՒՄԻ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ

Հիսուս Իր Բարոզյության սկզբին ընտրեց 12 հոգու, որոնք շրջում էին Նրա հետ, իսկ հետագայում շարունակեցին Հիսուսի ավանդած պատգամները սովորեցնել տարրեր ազգերի: Նրանք կոչվեցին Հիսուս Քրիստոսի առաջյակներ, որ նշանակում է Հիսուս Քրիստոսի կողմից ուղարկվածներ, Հիսուս Քրիստոսի կողմից նշանակվածներ: Նրանց Բարոզյության շնորհիվ է, որ Բրիտանուրբյունը տարածվեց աշխարհում:

Հիսուսի 12 առաջյակներն են.

1. Պետրոս
2. Անդրեաս
3. Հակոբոս Ջերեդյան
4. Հովհաննես Ջերեդյան
5. Փիլիպպոս
6. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ
7. Թովմաս
8. Հակոբոս Ալփյան
9. Մատթեոս
10. ՂԵԲԵՈՍ (որ նաև ԹԱԴԵՈՍ է կոչվում)
11. Սիմոն Կանանացի
12. Հուդա Իսկարիովտացի

Այս առաջյակներից Հուդա Իսկարիովտացին է, որ Հիսուսին մատենց բշնամիների ձեռքը: Մատուրբյունից հետո, զգալով իր կատարած աններելի հանցանքը, Հուդա ինճնատյան եղավ, իսկ նրա փոխարեն ընտրվեց Մատթեոսը: Այս առաջյակներից Բարդուղիմեոսն ու Թադեոսը եկան Հայաստան և Բրիտանուրբյունը տարածեցին մեր երկրում:



Վ. ՀՈՎՀԱՍՏԻՅԱՆԻ— ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Առաջադրանք. դուրս գրել Առավածաշնչից Հովհ. ժԲ 47 համարը:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվ այդ օրերին Հիսուս լին բարձրացավ՝ ազոթելու, և ամբողջ զիշերն անցկացրեց Ասածուն ազոթելով: Եվ նրբ յույժ բացվեց, կանչեց Իր աշակերտներին և ընտրեց նրանցից տասներկուսին, որոնց և առաքյալներ անվանեց: Սիմոնին որին և Պետրոս կոչեց, և Անդրեասին՝ նրա եղբորը, և Հակոբոսին, և Հովհաննեսին, և Փիլիպպոսին, և Թարզուզիմեոսին, և Մատթեոսին, և Թովմասին, և Ալփեոսի որդի Հակոբոսին, և Սիմոնին՝ ՆախանձաՀույզ կոչվածին, և Հակոբի որդի Հուդային, և Իսկարիոփտացի Հուդային, որը և մատնիչ եղավ:

Եվ նրանց Հես միասին իջավ մի տափարակ տեղ, ուր նրա աշակերտների խումբը և ամբողջ Հրեաստանից ու Երուսաղեմից և այն կազմերից և Տյուրոսի ու Սիդոնի ծովեզրից շատ մեծ բազմություն եկել էր լսելու Նրան և բժշկվելու իրենց Հիվանդություններից: Եվ պիղծ ուղիներից տառապողները բժշկվում էին: Եվ ամբողջ խողովուրդն ուզում էր Նրան զիպչել, որովհետև նրանից շատ զորություն էր դուրս գալիս և բժշկում բոլորին:

(Ղուկ. Զ 12-19)



ՀԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Որպեսզի Իր սասձները ավելի հասկանալի և տպավորիչ լինեն մարդկանց, Հիսուս նրանց հետ հաճախ խոսում էր առակներով, սասցվածքներով, բնավոր խոսքերով: Դրա համար նա օրինակներ էր բերում մարդկանց կյանքից կամ բնությունից և ապա այդ օրինակների առակների միջոցով քացատրում էր ասելիքը:

Հիսուս Քրիստոսի սասձ առակներում արտահայտված են կյանքի գանձազանց նշմարտություններ: Դրանք գեղեցիկ են իրենց պատկերավոր մտածողությամբ, հակիրճությամբ, ուսանելի են և գեղարվեստական տեսակետից մեծ արժեք են ներկայացնում:

Ահա այդ առակներից մեկը.

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Նորից սկսեց Նա ուսուցանել ծովեզերքի մոտ, և Նոր շուրջը խնայեց բազում ժողովուրդը, այնպես որ Նա մտառու նստեց մի նավակի մեջ, ծովի վրա, մինչ ամբողջ ժողովուրդը ծովեզերքին շուրջանակի բռնել էր ցամաքը: Եվ Նա առակներով նրանց շատ բան էր ուսուցանում: Երանց սասում էր վարդապետություն մեջ. «Լսեցե՛ք՝ ահավասիկ մի սերմանող սերմանելու ելավ: Եվ պատահեց, որ սերմանելու ժամանակ սերմի մի մասն ընկա ճանապարհի եզերքը, և թռչունը եկավ և կերավ այն: Ուրիշ մի մաս ընկավ ապառաժի վրա, որտեղ շատ հոգեկար. և շուտով բուսավ, բայց որովհետև հողը հյուսիս չուներ, երբ արևը ծագեց՝ խանձվեց. և քանի որ արմատներ չուներ՝ չորացավ: Մի ուրիշ մաս ընկավ փշերի մեջ՝ փշերը բարձրացան և խեղդեցին այն, և պտուղ չտվեց: Իսկ մի ուրիշ մաս էլ ընկավ լավ հողի վրա, բուսանելու

աճեց ու պտուղ տվեց. մեկի դիմաց՝ երեսուն, և մեկի դիմաց՝ վաթսուս, և մեկի դիմաց՝ հարյուր»: Եվ սասում էր. «Ով որ լսելու ականջ ունի, թող լսի»:

Եվ երբ առանձին մնաց, Նրա շուրջ եղողները աշակերտներին Հետ միասին Հարցրին Նրան առակների մասին: Եվ նրանց սասաց. «Զեք է արված իմանալ Աստուծո սրբալուծության խորհուրդները, բայց նրանց Համար, որ ձեզինք զուրս են, ամեն ինչ առակներով կլինի, որպեսզի տեսնելով տեսնեն ու չտեսնեն և լսելով լսեն ու չիմանան, որ մի գուցե երբեք դարձի գան, և իրենց ներվի»:

Եվ սասաց նրանց. «Այս առակը չէ՞ք Հասկանում, ապա ինչպե՞ս պիտի Հասկանաք բոլոր առակները: Նա, որ սերմանում է, խոսքն է սերմանում: Ծանապարհի եզերքին սերմանվածները նրանք են, որոնց մեջ խոսքն է սերմանվում, երբ լսում են այն, սաստանալ գալիս է և զուրս է Հանում նրանց սրտերի մեջ սերմանված խոսքը: Ապառաժի վրա սերմանվածները նրանք են, որ երբ լսում են խոսքը, իսկույն ուրախությամբ ընդունում են այն, և որովհետև իրենց մեջ արմատներ չունեն, այլ մի որոշ ժամանակի Համար են, երբ խոսքի պատճառով նեղություն կամ Հալածանք է լրա Հասնում, իսկույն գայթակղվում են: Իսկ նրանք, որ սերմանվեցին փշերի մեջ, այդ նրանք են, որ լսում են խոսքը, սակայն այս աշխարհի Հողերը և Հարստություն պատրանքները ներխուժում և խեղդում են խոսքը, և այն անպտուղ է լինում: Եվ լավ հողի մեջ սերմանվածները նրանք են, որ լսում են խոսքը և ընդունում ու պտուղ են տալիս. մեկի դիմաց՝ երեսուն, մեկի դիմաց՝ վաթսուս և մեկի դիմաց՝ հարյուր»:

(Մարկ. Դ 1-20)

Առաջագրանք. դուրս գրել Աստվածաշնչից Մատթ. Գ 10, և 8, և 37 համարները:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԸ

Ե՛վ ասաց. «Մի մարդ երկու որդի ուներ. նրանցից կրտսերը Հորն ասաց. Հայր, տո՛ւր քո ունեցվածքից ինձ Հասնող բաժինը: Ե՛վ նա ունեցվածքը բաժանեց նրանց Քիչ օրեր Հետո կրտսեր որդին, փողի վերածնելով ամեն ինչ, գնաց Հեռու աշխարհ և այնտեղ վատնեց իր ունեցվածքը, որովհետև անառակ կյանքով էր ապրում: Ե՛վ երբ ամեն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, և նա սկսեց չքավոր դառնալ: Գնաց դիմեց այդ երկրի քաղաքացիներից մեկին, և սա ուղարկեց նրան իր ազարակը՝ խոզեր արածեցնելու: Ե՛վ նա ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պաղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք այդ նրան չէր առախ: Ապա խելքի եկավ և ասաց. քանի՞ վարձկաններ կան իմ Հոր տանը, որ առատ Հաց ունեն, իսկ ես այստեղ սովամահ կորչում եմ: Վեր կենամ, գնամ իմ Հոր մոտ և նրան ասեմ. Հայր մեղանչեցի երկինքի դեմ ու քո առաջ և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրու իբրև քո վարձկաններից մեկը: Ե՛վ վեր կացավ, եկավ իր Հոր մոտ. և մինչ դեռ Հեռու էր, Հայրը տեսավ նրան ու զթաց. վեր կացավ և վազեց նրան ընդառաջ, ընկավ նրա պարանոցով և Համբուրեց նրան: Ե՛վ որդին ասաց նրան. Հայր մեղանչեցի երկինքի դեմ և քո առաջ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Հայրը իր ծառաներին ասաց անմիջապես Հանեցե՛ք նրա նախկին պատուճառը և Հազցրե՛ք նրան, մատանին նրա ձեռքը տվեք և նրա ոտքերին՝ կոշիկներ. բերե՛ք պարարտ եզր, մորթեցե՛ք ուտենք և ուրախ լինենք, որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց: Ե՛վ սկսեցի

ուրախանալ: Իսկ նրա ավագ որդին ազարակում էր. և մինչ գալիս էր և տանը մտաեցավ, լսեց երգերի և պարերի ձայնը. և իր մոտ կանչելով ծառաներից մեկին՝ Հարցրեց, թե այդ ի՞նչ է: Ե՛վ սա նրան ասաց. քո եղբայրը եկել է, և քո Հայրը մորթեց պարարտ եզր, որովհետև ողջ-առողջ ընդու եց նրան: Նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել. իսկ Հայրը դուրս ելնելով՝ աղաչում էր նրան: Որդին պատասխանեց և ասաց Հորը. այս քանի՞ տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո Հրամանները զանց չեմ արել. ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներս Հեսու ուրախություն անեի: Երբ եկավ քո այդ որդին, որը քո ունեցվածքը կերավ պոռնիկների Հետ, պարարտ եզր նրա Համար մորթեցիր: Հայրը նրան ասաց. որդյա՛կ, դու միշտ ինձ Հետ ես, և ամեն ինչ, որ իմն է՝ քոն է: Բայց պետք է ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր՝ և գտնվեց»:

(Լուկաս ԺԵ 11-32)



ՀԻՍՈՒՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՆՆԵՐԸ

Հիսուս Աստվածորդին իր երկրային կյանքի ժամանակ կատարեց այնպիսի գործեր, որոնք սովորական մահկանացուների համար անհնարին են և համարվում են հրաշքներ: Հիսուս կատարեց այդ հրաշքները՝ ցույց տալու համար Աստծու զորութունը, և որպեսզի մարդիկ հավատան, որ Ինքը Քրիստոսն է՝ Աստծու Որդին: Հիսուս կարողանում էր հրաշքներ գործել, որովհետև ուներ հավատք իր փրկչական գործի նկատմամբ:

Նոր Կտակարանում նկարագրված են Հիսուսի գործած քաղմաթիվ հրաշքներ: Նա ջուրը գինու վերածեց մահացածին նորից կյանք տվեց, խուլին՝ լսողություն կույրին՝ լույս պարգևեց, անբուժելի հիվանդներին բժշկեց քայլեց ծովի վրայով, չարը հալածեց մարդկանց միջեց և այլն:

Հիսուս պատվիրեց իր հետևորդներին ճշմարիտ հավատ ունենալ: Եվ եթե ճշմարիտ հավատ ունենանք և ի սրտե ազդեցիվ դիմենք Աստծուն, ապա Աստված կկատարի մեր խնդրանքը:

Առաջադրանք. դուրս գրի Աստվածաշնչից Մարկ. Ը 34-38, Դուժ ԺԷ 5-6 համարները:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետևյալ օրը Հիսուս գնում էր մի քաղաք, որ նային էր կոչվում: Նրա Հետ էին գնում նաև իր աշակերտները և բազում ժողովուրդ: Երբ քաղաքի դռանը մոտեցավ, ահա դուրս էր բերվում մի մեռել, միակ որդին իր մոր, որ մի այլի կինն էր: Եվ քաղաքից բազում ժողովուրդ նրա Հետ էր: Երբ Տերը նրան տեսավ, գթաց նրա վրա և ասաց. «Մի՛ լար»: Մոտենալով՝ դադադին դիպավ: Դադադը սանոդները կանգ առան: Եվ նա ասաց. «Քե՛զ հմ ասում, ո՛վ պատանի, վե՛ր կաց»: Մեռելը վեր կացավ, նստեց և սկսեց խոսել: Եվ Հիսուս նրան մորը տվեց: Եվ ահա պատեց բոլորին. փառավորում էին Աստծուն և ասում. «Մի մեծ մարգարե է Հայտնվել մեր մեջ» և «Աստված այցելութուն է տվել իր ժողովրդին բարությամբ»: Եվ Նրա մասին այս զրույցը տարածվեց ամբողջ Հրեաստանում և երկրի բոլոր կողմերում:

(Դուկաս Է 11-17)



ՀԻՍՈՒՍԻ ԵՐԿՈՒԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

«Հիսուսի քարոզչությունը» բաժնում արդեն որոշ չափով իմացանք Հիսուսի պատվիրանների մասին:

Հիսուսի պատվիրաններ ասելով նկատի ունենք այն պատգամները, խրատներն ու հորդորները, նրա հաստատած այն օրենքները, որոնց պետք է հետևել՝ իսկական քրիստոնյա, Հիսուսի իսկական հետևորդ լինելու համար:

Հիսուսի գլխավոր պատվիրանները հետևյալներն են.

ա) «Սիրիր քո Տեր Աստուծոն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հագուստով ու քո ամբողջ գորուքամբ» (Մարկ. ԺԲ 29):

բ) «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արե՛ք նրանց, որովհետև ա՛յդ իսկ են Օրենքն ու մարգարեները» (Մատթ. է 12):

գ) «Սիրիր ընկերոջդ անծիր պես» (Ղուկ. Ժ 27):

Հիսուսի բոլոր մյուս պատվիրանները հավասարի, արդարության, մարտության կամ բարության մասին թխում են այս պատվիրաններից:

Առաջարկում. դուք գրել Աստվածաշնչից Մատթ. ԻԲ 34-40, Հովհ. ԺԳ 34-35 համարները:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԵԶՆԻԿ ՎԱՐԳԱՊԵՏ ԿՈՂՐԱՑՈՒ ԽՐԱՏՆԵՐԻՑ

(5-րդ դար)

*Ոչ ոքի մի՛ տրամեցնիր ու ոչ ոքից մի՛ տրամիր:
Եթե Աստուծու Համար ես Հալածվում՝ վախ մի՛ ունենա:
Եթե բոլոր կրոնակիցներէդ Հիվանդությունը քեզ ցավ
չի պատճառում, մի լինի՛ր առաջնորդ:
Եթե անարժանին ինչպես պետքն է Հես կշտամբում՝ մի
լինիր ուսուցիչ:*

*Ուսուցչին սուրբ վարքն է քաջասիրտ դարձնում:
Լայ է մաքուր մաքով քնել, քան պիտի մաքով աղոթել
և վարձատրություն չտանալ և իզուր Հարչարվել:
Մարմինդ կոփիր նեղությամբ, իսկ սիրտդ՝ Աստուծու
երկյուզով, որ չվախենաս սատանայի մահաբեր նետերից:
Սերն ու երկյուզը քեզ բնավորություն դարձրու, որ
խաբուսթյամբ չտանջվես:*

*Գոտեպնդվիր Քրիստոսի Հարչարանքներով և Նրա
Համար Համբերիր, որ վայելես անանց բարությունները:*

*Ով գարնանը Հանդիստ է մնում, ձմառը սովից ու
սառնամանիքից մեռնում է:*

Աստված ինչ շնորհներ որ տալիս է քեզ, կարիքավորների պետքերի Համար ծառայեցրու, որ շնորհներն աղբյուրի պես առատանան, և դու կփառավորվես:

Նրաոտի պատրվակով թույն մի թափեր կրոնակցիդ վրա:

ՀԻՍՈՒՍԻ ՄԱՀԸ

Ինչպես արդեն գիտեցեք, Հիսուս մկրտվեց Հովհաննես Մկրտչից Հորդանան գետում և անապատում քառասորյա փորձություններից հետո սկսեց Իր քարոզչությունը: Գիտեցեք նաև, որ այդ ժամանակ Հրեաստանը գտնվում էր Հռոմեական կայսրության իշխանության ներքո: Հիսուսի քարոզչությունը և նոր վարդապետությունը բուրբուն ձեռնադրեցին: Հրեաները պաշտում էին միայն Եհովա Աստծուն և չընդունեցին Աստվածորդուն՝ Հիսուս Բրիտանիան: Հրեաները սպասում էին, որ Աստծու կողմից կուղարկվի մի փրկիչ, որ պայքարի հռոմեացիների դեմ և վերականգնի Հրեաստանի անկախությունը: Մինչդեռ Հիսուս բոլոր մարդկանց խոստանում էր *երկնային արքայություն*: Իսկ հռոմեացի իշխողների համար էլ Հիսուս ընդունելի չէր, որովհետև Աստծու առաջ բոլոր մարդկանց հավասարությունն էր քարոզում: Ահա այս պատճառով Նրա դեմ հալածանք սկսեցին նախ հրեաները: Սակայն նրանք չէին կարողանում հիմնավոր մեղադրանքներ գտնել՝ Հիսուսին ձերբակալելու: Այդ ժամանակ Հուդա Իսկարիովացին մատնեց Հիսուսին և Նրան հանձնեց հրեաների ձեռքը: Հրեաները Հիսուսին հանձնեցին հռոմեացի ղեկավարներին՝ պահանջելով մահվան դատապարտել, որովհետև Նա Իրեն Աստվածորդի էր անվանում: Հրեաստանի այդ մասի կառավարիչը՝ Պիղատոսը, նախ որոշեց ձեռքերը լվալ Հիսուսի արյունից, այսինքն՝ պատճառ չդնունալ արդարի մահվան, սակայն հետո ենթարկվեց հրեաների պահանջին և զինվորներին հրամայեց Հիսուսին յաչել:

Լինելով Աստված՝ Հիսուս կարող էր խուսափել մահվանից: Բայց Նա կամավոր կերպով մահվան գնաց, որպեսզի հարություն առնի և այդպիսով ցույց տա մարդկանց, որ մահվանից հետո հարություն պիտի առնեն:

Հիսուս Իր մահվամբ ու հարությանբ մեզ ցույց տվեց, որ մեր բարի, արդար ու առաքինի գործերով, մեր ճշմարիտ հավատով ու Իր պատվիրաններից հետևելով կարող ենք իմաստավորել մեր կյանքը և մահվանից հետո հարություն առնել ու ապրել Հիսուսի հետ՝ հավիտենական կյանքով:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Գործք. Ի Ա. 13, Հակոբոս Դ 8 համարները:



ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԼԻՍՈՒՄԻ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Հասան Գազաթ կոչված տեղը, այնտեղ Նրան խաչը Հաննցին. և չարագործներին էլ՝ մեկին՝ աջ կողմում, մյուսին՝ ձախ կողմը խաչեցին: Եվ Հիսուս ասաց. «Հայր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»: Եվ Նրա զգեստները բաժանելու Համար վիճակ զցեցին: Իսկ ժողովուրդը նայում էր. իշխանավորները նրանց Հետ միասին ծաղրում էին Նրան և ասում. «Ուրիշներին արգտեց, թող ինքն իրեն էլ ազատի, եթե դա է Քրիստոսը՝ Աստուծո Որդին, Ընտրյալը»: Ջինվորներն էլ ծաղրում էին Նրան. առաջ էին գալիս, քացախ էին մատուցում Նրան և ասում. «Եթե դու ես Հրեաների թագավորը, փրկի՛ր ինքզ քեզ»: Եվ Նրա վրա մի գրուժյուն կար՝ գրված Հունարեն, լատիներեն և եբրայերեն գրերով, թե՛ սա՛ է Հրեաների արքան:

Իսկ կախված չարագործներից մեկը ՀայՇոյում էր Նրան և ասում. «Նու չե՛ս Քրիստոսը. փրկի՛ր ինքզ քեզ և մեզ»: Նրա ընկերը նրան աստեղով՝ պատասխան տվեց և ասաց. «Աստուծոց չե՞ս վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում: Եվ մենք իրավացիորեն արժանի Հատուցումն ենք ստանում այն գործերի Համար, որ կատարեցինք, իսկ սա որևէ վատ բան չի արել»: Եվ ասաց Հիսուսին. «Հիշի՛ր ինձ, Տե՛ր, երբ գաս Քո արքայությամբ»: Եվ Հիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ Հետ դրախտում կլինես»:

Եվ շուրջ վեցերորդ ժամն էր. և խավար եղավ ամբողջ երկրի վրա մինչև իններորդ ժամը. արեգակը խավարեց: Եվ տաճարի վարագույրը մեջտեղից պատռվեց: Եվ Հիսուս բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Հա՛յր, Քո ձեռքն եմ ավանդում իմ Հոգին»: Երբ սա ասաց, Հոգին տվեց:

Եվ Հարյուրապետը, տեսնելով ինչ որ պատահեց,

փառավորեց Աստուծու և ասաց. «Իսկապես այս մարդը արդար էր»: Եվ ամբողջ ժողովուրդը, որ եկել էր ու գիտում էր այս տեսարանն ու կատարվածը, ծեծում էր կուրծքը և վերադառնում: Նրա բոլոր ծանոթներն էլ կանգնել էին Հեռվում. և կանայք, որոնք Գալիլիայից Նրա ետևից էին եկել, տեսնում էին այս բաները:

(Ղուկաս ԻԳ 33-49)



Հիսուսի մահվանից հետո, երեկոյան, Նրա մարմինը իջեցրին խաչից և դրեցին մի նորափոր դամբարան-գերեզմանում: Գերեզմանի մուտքը փակեցին մի մեծ քարով և պահակներ կարգեցին: Երեք օր անց Մարիամ Մագդաղենացին և էլի երկու կանայք՝ այցի գնացին գերեզման: Երբ նրանք մոտեցան գերեզմանին, տեսան, որ գերեզմանի դուռը բաց է, իսկ գերեզմանը՝ բացուր: Այնտեղ նրանց երևաց Աստուծու ուղարկած հրեշտակը, որ պատվիրեց նրանց Հիսուսի հարուրյան մասին հայտնել առաջալուսերին: Նրանք մոտեցին ու իրենց տեսածի մասին պատմեցին առաջալուսերին: Հաջորդ օրը հարուրյուն առած Հիսուս եկավ առաջալուսերի մոտ և քառասուն օր մնաց նրանց հետ: Հարուրյուն առած Հիսուսին տեսան շատ-շատերը:

Փառասուններորդ օրը Հիսուս պատվիրեց առաջալուսերին քրիստոնեությունը տարածել քոյոք ժողովուրդներին մեջ, սովորեցնել մարդկանց իրենց հայտնված Աստվածային պապագամները և մկրտել՝ չոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Առաջալուսերին տված այս վերջին պատվիրանից հետո Հիսուս համարավեց՝ բարձրացավ երկինք՝ խոստանալով երկրորդ անգամ գալ, երբ ժամանակը կգա՝ վարձատրելու մարդկանց իրենց կատարած գործերի համեմատ:

Հիսուսի երկրորդ գալստյանը պիտի միշտ պատրաստ լինենք՝ պահելով Հիսուսի պատվիրանները, լինենք մահուր ու արդար, մեղէնը չգործենք, որպեսզի Նրա հետ արժանանանք հավիտենական կյանքի:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Մատթ. ԻԸ 16-20 համարները:

ԱՆՀԱՎԱՏ ԹՈՎՄԱՍԸ

Իսկ Թովմասը՝ տասներկուսից մեկը, Երկվորյակ կոչվածը, նրանց հետ չէր, երբ Հիսուս եկավ: Մյուս աշակերտները նրան ասացին, թե Տիրոջը տեսանք: Եվ նա նրանց ասաց. «Եթե չտեսնեմ նրա ձեռքերի վրա մեխերի նշանը և իմ մատները մեխերի տեղերը չդնեմ ու իմ ձեռքը Նրա կողերի մեջ չխրեմ, չեմ հավատա»:

Ութ օրից հետո աշակերտները դարձյալ ներսուծ էին, և Թովմասը՝ նրանց հետ: Հիսուս եկավ փակ դռներով, կանգնեց մեջտեղ ու ասաց՝ Խաղաղությո՛ւն ձեզ: Ապա Թովմասին ասաց. «Բե՛ր քո մատները և դի՛ր այստեղ ու տես իմ ձեռքերը. և բե՛ր քո ձեռքը ու խրի՛ր իմ կողերի մեջ. անհավատ մի՛ եղիր, այլ՝ հավատացյալ»:

Թովմասը պատասխան տվեց ու Նրան ասաց՝ Տե՛ր իմ և Աստված իմ: Հիսուս նրան ասաց. «Այդ՝ որովհետև դու ինձ տեսար և հավատացիր. երանի՛ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան»:


Իր աշակերտներին առաջ Հիսուս այլ նշաններ էլ արեց, որոնք այս գրքում զբոված չեն: Այլ սա այն չափով զբովեց, որ դուք հավատաք ու Նրա անունով հավիտենական կյանքն ընդունեք:

(Հովհ. Ի 24-31)





Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆԺ - ԱՍՏՎԱԾԱՄԱՅԻՐԸ ԳԱՆԻ ԿԵՆ

A decorative rectangular border with intricate floral and scrollwork patterns, framing the central text.

ԵԿԵՂԵՑԻ

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Ինչպես իմացանք «Քրիստոսի Եկեղեցի և Եկեղեցու խորհուրդներ» նյութից, Եկեղեցին քրիստոնյաների միությունն է և այն կառույցը, ուր հավաքվում են հավատացյալները՝ աղոթելու և արարողություններ կատարելու համար: Իսկ *խորհուրդ* բառը կրոնական իմաստով նշանակում է աներևույթի կամ Աստվածայինի հայտնությունը, հոգևոր կապը Աստծու հետ: Իմացանք նաև, որ խորհուրդների տեսանելի կողմը արարողություններ են, որոնք յոթն են. մկրտություն, դրոշմ, ապաշխարություն, հաղորդություն, պսակ ամուսնության, կարգ ձեռնադրության և կարգ հիվանդաց կամ վերջին օծում:

Եկեղեցու յոթ խորհուրդները զանազան սրբարար ու խորհրդավոր արարողություններ են, երբ տեսանելի և զգալի նշանների շնորհիվ խորհուրդ ընդունողը ստանում է Աստվածային շնորհներ և հոգեպես կապվում Աստծու հետ: Խորհուրդները հաստատվել են Հիսուս Քրիստոսի կողմից կամ վկայված են Նոր Կտակարանում:

Եկեղեցու խորհուրդները կատարվում են Եկեղեցու սպասավորների՝ հոգևորականների միջոցով: Խորհուրդներից առաջին չորսը (մկրտություն, դրոշմ, ապաշխարություն և հաղորդություն) անհրաժեշտ են բոլոր հավատացյալներին, իսկ վերջին երեքը (պսակ ամուսնության, կարգ ձեռնադրության և կարգ հիվանդաց)՝ միայն ցանկացողներին և հատուկ պատրաստվածություն ու կոչում ունեցողներին: Մկրտությունը, դրոշմն ու ձեռնադրությունը կատարվում են միայն մեկ անգամ, այսինքն անկրկնելի են, պսակը կրկնվում է խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ ապաշխարությունն ու հաղորդությունը՝ ըստ հոգևոր կարիքի և անհրաժեշտության:


Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Գործք. Ա. 9-11 համարները:

ԸՆԹԵՐՅԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՎԱՏՔԻ ՀԻՍՈՒՄԻ ՀԱՆԴԵՊ

Արդ, ոչ ոք երկինք չի ելել, եթե ոչ Նա, որ իջավ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքում է: Եվ ինչպես որ Մովսեսը անապատում բարձրացրեց օձը, նույնպես մարդու Որդին պետք է բարձրանա, որպեսզի ով Նրան հավատում է, Հավիտենական կյանքն ընդունի. քանի որ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն ասեց, որպեսզի ով Նրան հավատում է՝ չկորչի, այլ ընդունի Հավիտենական կյանքը. որովհետև Աստված իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատի աշխարհը, այլ՝ որպեսզի աշխարհը Նրանով փրկվի: Ով Նրան հավատում է, չպիտի դատապարտվի, և ով Նրան չի հավատում, արդեն իսկ դատապարտված է, քանի որ Աստու Միածին Որդու անվանը չհավատաց: Եվ դատաստանը այսպես իսկ է. որ լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետև իրենց գործերը չար էին. որովհետև, ով չարիք է գործում, ասում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որպեսզի նրա գործերը իր երեսովը չտան: Իսկ ով ճշմարտությանն է նվիրվում, գալիս է դեպի լույսը, որպեսզի նրա գործերը հայտնի լինեն, թե Աստծով կատարվեցին:

(Հովհ. Գ 13. 21)



ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Մկրտության խորհուրդը հաստատվել է Քրիստոսի կողմից այն ժամանակ, երբ Ինճն իսկ մկրտվեց Հովհաննես Մկրտչի ձեռքով: Իսկ հարուբյունից հետո առաջալեքերին պատվիրեց նստեցանել և մկրտել լոյոր հեթանոսներին:

Մկրտությունը բառը նշանակում է լվացում, մաքրություն: Իսկ կրոնական իմաստով նշանակում է մաքրում նախնական կամ Ազամական մեղքից, որ անցնում է ժառանգաբար՝ Աստու պատվիրանի հանդեպ առաջին մարդու՝ Ադամի անհնազանդության հետևանքով: Կրոնական իմաստով մկրտությունը նշանակում է նաև վերստին ծնունդ, որովհետև մաքրվելով Ազամական անհնազանդության ու նաև անձնական, մինչև մկրտությունը գործած մեղքերից, արարողությունից հետո, որպես հոգով նոր մարդ, ծնվում ենք մկրտության ավազանից: Մկրտության շնորհիվ դառնում ենք քրիստոնյա և եկեղեցու անդամ: Այս պատճառով էլ կրկնամկրտություն կամ երկրորդ մկրտություն կատարելը սխալ է: Մեր եկեղեցու համար ընդունված է, որ մկրտության ժամանակ լինի կնճախյալ (մկրտության քավոր): Մկրտությունից հետո կնճախյալ պարտավոր է մկրտվողի ծնողների հետ հետևել նրա քրիստոնեական, ազգային, հոգեկան ու բարոյական դաստիարակությանը: Կնճախյալը ինքը նույնպես նախորդ պիտի մկրտված լինի: Մկրտությունը արարողությունը կատարվում է հոգևորականի կողմից, օրհնված ջրով: Մկրտվելով մենք ոչ միայն սրբվում ենք մեղքից և որդեգրվում Աստու, այլև եղբայրանում ենք իրար հետ, իրրև Սուրբ Ավազանից ծնվածներ և պարտավոր ենք օգնել միմյանց: Մկրտությամբ մենք դառնում ենք մեկ եկեղեցու զավակներ և պետ է ամեն գնով պահենք ու պաշտպանենք մեր հավատն ու մեր եկեղեցին: Առանց

մկրտույթյան ու գրոշմի բոլոր մյուս խորհուրդները վավերական չեն համարվում և չեն կատարվում:

Առաջագրանք. գուրս գրել Աստվածաշնչից Մատթ. Ե 6 համարը:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԻՍՈՒՍ ԵՐԻՎՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Շարաթվա առաջին օրվա երեկոն էր: Եվ այնտեղ, ուր որ աշակերտները հաժաքված էին և դռները փակած՝ հրեաների վախի պատճառով, Հիսուս եկավ, կանդնեց նրանց մեջտեղ ու ասաց՝ Խաղաղություն ձեզ: Այս ասելով, նրանց ցույց տվեց իր ձեռքերն ու կողերը. և աշակերտներն ուրախացան, երբ տեսան Տիրոջը: Նա դարձյալ նրանց ասաց. «Խաղաղություն ձեզ, ինչպես Իմ Հայրը Ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ»: Երբ այս ասաց, նրանց վրա փչեց և ասաց. «Առեք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրան ներված կլինի. եթե մեկի մեղքերը կապեք, կապված կլինի»:

(Հովհ. Ի 19-23)



Դրոշմը կազմում է մկրտութեան անբաժան մասը: Դրոշմի արարողութիւնը մեր եկեղեցում կատարվում է մկրտութեանից անմիջապէս հետո: Դրոշմ նշանակում է մկրտվածի օծում կամ կնիք, որի պատճառով մկրտութեանը և դրոշմը միասին կոչվում են նաև կնունք:

Դրոշմի արարողութեան խորհուրդը՝ կապված է Քրիստոսի մկրտութեան հետ, որովհետև, երբ Քրիստոս Հորդանանում մկրտվեց Հովհաննես Մկրտչի կողմից, Սուրբ Հոգին աղավակեց իջավ նրա վրա, և երկնքից լսվեց Հայր Աստուծո ձայնը, որ ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին»: Առաջալսելի վրա եույնպէս իջավ Սուրբ Հոգին, երբ նրանք Հիսուսի պատվերով պատրաստվում էին գնալ Բարոզելու և մկրտելու հեթանոսներին:

Դրոշմի ժամանակ օգտագործվում է Սուրբ Մյուռոնը: Մյուռոնով մկրտվածը դրոշմվում, վավերացվում և վերջնականապէս հաստատվում է որպէս քրիստոնյա: Սուրբ Մյուռոնը խորհրդանշում է նաև Սուրբ Հոգու նյութեղեն ներկայութիւնը և ազդեցութիւնը դրոշմվողի վրա:

Դրոշմի ժամանակ հոգևորականը Մյուռոնով օծում է մկրտվածի նակատը, աչքերը, էիքը, բերանը, բիւուրը, կուրծքը՝ սրտի կողմից, ձեռքերի ամբերն ու ձեկերը:

Մյուռոնը օրհնվում է 7 տարին մեկ անգամ: Մյուռոնն պատրաստելիս օգտագործվում են քառասունից ավելի բուրբուրանալիս տարբեր ծաղիկների յուղեր, գինի և այլն: Նոր Մյուռոնին անպայման խառնվում է հին Մյուռոնից: Հատուկ արարողութիւններով սրբագործվում է նոր Մյուռոնը և օրհնվում Գրիգոր Լուսավորչի Սուրբ Աջով, Կարողիկոսի կողմից:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից. Մատթ. Ե 8 համարը:

ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՂՐԱՑՈՒ ԽՐԱՏՆԵՐԻՑ

(5-րդ դար)

Եթե մեկից որևէ բան ես ստանում , Հիշիւր սովորական աղոթքի մեջ:

Մաքուր սրտից (բխած) աղոթքը պատարագի (նման) փրկութիւնն է անում:

Համատակցին սիրող կրոնավորը Համանման է Քրիստոսին:

Ով եղբոր նկատմամբ ոխ ունի, դաշնակից է ստանալին. ով կասկածով է քնոււմ, բարկացնում է Աստուծուն:

Թո՛ղ փուլ անցնող մտքերն ու խոսքերը, բեւեռվիր Աստուծու երկյուղին և միտքդ բեր դատաստանի օրը:

Ով ջանում է մեկից բան խել, Քրիստոսի վրա Հույս չունի:

Եթե մեկը քեզից խնդրում է, և տալիս ես, շնորհակալ եղիր Աստուծու, որովհետեւ դու՛ ավելի շահեցիր, քան նա (ստացողը):

Այլ են առաքինութիւնները, և այլ՝ դրանք ձեռք բերելը:

Միտող սովորեցրու սերել ցեղակցիդ, մարմինդ էլ այնպէս սիրիր, ինչպէս (կսիրես) նենգավոր մարդուն:



Ձնայած մկրտությամբ ու դրոշմով մե՛նք մաքրվում ենք մեղքերից ու որդեգրվում Աստծուն, բայց մեր հետագա կյանքի ընթացքում գործում ենք ապրքեր մեղքեր: Այդ մեղքերից մաքրվելու և մեր հավատքի մեջ վերահաստատվելու համար է ապաշխարությունը:

Ապաշխարել նշանակում է գիտակցել գործած մեղքը և զղջալ դրա համար: Սակայն երե որևէ մեկը մտածի, որ միշտ կարող է հանցանք կամ մեղք գործել, հետո ապաշխարել և բողոքյուն ստանալ Ապտծուց, ապա առավել մեծ մեղք գործած կլինի:

Մեր եկեղեցին ընդունում է մեղքը խոստովանելու և բողոքյուն ստանալու երկու ձև՝ ընդհանրական և անանձնական: Ընդհանրական խոստովանության ժամանակ հոգևորականը կարդում է ապաշխարության համապատասխան աղոթքները և յուրաքանչյուր պարբերությունից հետո հավատացյալը զղջալով ասում է՝ «Աստուած բողոքիս շնորհեսցէ»: Մեր գործած մեղքին բողոքյուն է տրվում Աստծուց, երբ ապաշխարությունը ի սրտե է: Անանձնական խոստովանությունն այն է, երբ հոգևորականին առանձին պատմում ենք մեր գործած մեղքը, և եթե զղջում և քավում ենք մեր մեղքը, բողոքյուն ենք ստանում հոգևորականի կողմից և կատարում նրա խորհուրդները: Սյսպիսով, և՛ ընդհանրական և՛ անանձնական խոստովանության ժամանակ անհրաժեշտ է գիտակցել մեղքը, խոստովանել և խոստանալ այլևս չկրկնել այն:

Մեղքերին բողոքյուն է տրվում հոգևորականի միջոցով, որովհետև Հիսուս Քրիստոս առաքյալներից, իսկ առաքյալներն էլ իրենց հաջորդներին պատվիրեցին այսպես. «Եթե որևէ մեկի մեղքերին բողոքյուն տա՛մքրված կլինի» (Հովհ. Ի 25):

Ապաշխարությունից հետո հաղորդություն ենք ստանում:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍԱՏԱՆԸ


Արդ, երբ որ մարդու Որդին (այսինքն՝ Հիսուս Քրիստոս) զա իր փառքով և բուրբ Հրեշտակները՝ իր Հետ, այն ժամանակ Նա պիտի նստի իր փառքի աթոռ վրա, ու Նրա առաջ պիտի Հավաքվին բոլոր ազգերը, և Նա նրանց միմյանցից պիտի զատի, ինչպես մի Հովիվ, որ զատում է ոչխարները այծերից: Եվ ոչխարները իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին: Այն ժամանակ թազավորը (սոսքը Հիսուսի մասին է) պիտի ասի նրանց, որ իր աջին են. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ Համար պատրաստված արքայությունը, որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք խմելու, օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ Հագցրիք, Հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ մոտ եկաք»: Այն ժամանակ արգարները պիտի պատասխանեն Նրան ու ասեն. «Տե՛ր, ե՛րբ տեսանք Քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ՝ ծարավ և ջուր տվեցինք, ե՛րբ տեսանք Քեզ օտար և մեր մեջ առանք, կամ՝ մերկ և Հագցրինք, ե՛րբ տեսանք Քեզ Հիվանդ կամ բանտի մեջ ու եկանք Քեզ մոտ»: Թազավորը պիտի պատասխանի ու ասի նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ի՛նձ Համար արեցիք»: Այն ժամանակ Նա պիտի ասի նրանց, որ իր ձախին են. «Անիժյալներ, զնացե՛ք ինձնից Հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր Հրեշտակների Համար, որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք չտվիք, ծարավ էի, և ինձ ջուր չտվիք, օտար էի, և ինձ ձեր մեջ չառաք, մերկ էի, և ինձ չՀագցրիք, Հիվանդ էի ու բանտի մեջ, և ինձ տեսնելու չեկաք»: Այն ժամանակ նրանք էլ պիտի պատասխանեն ու ասեն. «Տե՛ր,

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Հովհ. Ա. 36 համարը:

և՞րբ տեսանք Քեզ քաղցած, կամ ծարավ, կամ օտար, կամ մերկ, կամ հիվանդ, կամ բանտի մեջ ու Քեզ չծառայեցինք»: Այն ժամանակ պիտի պատասխանի նրանց ուսափ. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որովհետև այս փոքրերից մեկին այդ չարեցիք, ինձ համար էլ չարեցիք»:

Եվ նրանք պիտի զնան դեպի հավիտենական տանջանքները, իսկ արդարները՝ հավիտենական կյանքը:

(Մատթ. ԻԵ 31-46)



ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հաղորդվել՝ նշանակում է ինչ-որ բանի մասնակից լինել, իսկ կրոնական իմաստով՝ միանալ Հիսուս Քրիստոսին՝ մասնակից լինել առաքյալների հետ Հիսուսի վերջին ընթրիին:

Այս խորհուրդը նույնպես հաստատված է Հիսուսի կողմից: Վերջին անգամ Հիսուս ցանկանում է Ջատիկը նշել առաքյալների հետ, որից հետո, նույն գիշերը, տեղի է ունենում Հիսուսի մասնուբյուրը: Ահա այդ վերջին ընթրիի ժամանակ Հիսուս վերցնում է սեղանին դրված անթրիսմոս (քաղաքը) հացը, օրհնում և տալիս առաքյալներին՝ ասելով. «Առն՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»: Այնուհետև վերցնում է գինով լի բաժակը, օրհնում է այն և տալիս առաքյալներին՝ ասելով. «Խմեցե՛ք դրանից բուրդ, որովհետև այդ է Նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի վրա՝ մեղքերի բողոքյան համար»: Ապա Հիսուս պատվիրում է մշտապես կատարել այդ խորհուրդը և հիշել, որ Ինճը միշտ Իր հետևորդների հետ է:

Հաղորդության խորհուրդը միանայն է Հիսուս Քրիստոսին՝ խոստովանելով և ընդունելով նրան որպես Աստված և հետևելով նրան՝ որպես նշմարիտ աշակերտներ:

Հաղորդություն ստանում ենք Եկեղեցու յոթ խորհուրդներից հետո, ինչպես նաև Ս. Պատարագի ժամանակ: Հաղորդություն ստանալուց առաջ անհրաժեշտ է խոստովանվել և մաքրվել մեղքերից: Հաղորդությունից հետո պետք է աշխատենք մեղք չգործել, որպեսզի նմանվենք Իր մարմինն ու արյունը մեզ համար գոհարեբած Աստվածորդուն՝ Հիսուսին:

Հաղորդության հացն ու գինին խորհրդարար Հիսուսի մարմինն ու արյունն են դառնում Սուրբ Պատարագի ժամանակ: Հաղորդվելուց առաջ պետք է ներել մարդ-

կանց՝ մեր նկատմամբ գործած հանցանքների համար, և հաղորդութունն ստանալ բոլորի հետ հաշտված ու խաղաղ հոգով:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Մատթ. ԻԶ 26-30 համալրները:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Եվ հրը ժամը Հասավ, սեղան նստեց, և տասներկու առաքյալներն էլ իր հետ: Եվ նրանց ասաց. «Հույժ ցանկացա այս պասեքը* ուտել ձեզ Հետ, քանի դեռ չեմ չարչարվիլ: Բայց ասում եմ ձեզ, թե այլևս չեմ ուտելու սրանից, մինչև որ պասեքը կատարվի Աստծու արքայության մեջ»: Եվ բաժակը վերցնելով, գոհութունն Հայտնեց և ասաց. «Առե՛ք այս և բաժանեցե՛ք ձեր մեջ. ասում եմ ձեզ, թե այսուհետև որթատունկի բերքից չեմ խմելու, մինչև որ դա Աստծու արքայությունը»:

Եվ Հացը վերցնելով գոհութունն Հայտնեց, կտրեց, տվեց նրանց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ շատերի Համար է տրված. այս արեք իմ Հիշատակի Համար»: Նույնպես և բաժակը վերցրեց ընթրիքից Հետո և ասաց. «Այս բաժակը նոր ուխտ է իմ արյունով ձեզ Համար թափված»:

(Ղուկ. ԻԲ 14-20)



*Պասեք-պասի՝ Ջատկի խնջույքը:

ՊՍԱԿ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ

Ավետարանը ամուսնացողներին պատվիրում է սիրել միմյանց և չբաժանվել իրարից: Ընտանիքը հիմքն է ազգի ու հասարակության: Այս պատճառով ամուսնացողները պիտի ունենան մտավոր հասունություն և պատրաստակամություն՝ սրբությամբ ու մաքրությամբ պահելու իրենց միավորության ուխտը, իրենց ընտանեկան սերը: Այսպիսի սիրով կապված ընտանիքում է, որ ծնվում է և մեծանում հավատացյալ ու հայրենասեր նոր սերունդը:

Այս բոլորը նկատի ունենալով՝ եկեղեցին սրբագործել է պսակի արարողությունը: Ամուսնացողները իրենց միավորության ուխտը հատուկ արարողությամբ կնքում են եկեղեցում՝ Աստծու աճառատ սեղանի առջև: Պսակի խորհրդով այր ու կին դառնում են մեկ մարմին և պարտավորվում օգնել միմյանց հիվանդությունների ու տարրեր դժվարությունների և դժբախտությունների դեպքում: Նրանք երկուսը միասին պարտավոր են դաստիարակել իրենց երեխաներին, որպեսզի նրանք ապագայում դառնան Հայաստանյայց Սուրբ եկեղեցու և հայ ժողովրդի արժանավոր զավակներ:

Պսակի արարողությունը կատարվում է եկեղեցում՝ ֆահանայի կամ այլ հոգևորականի կողմից:

Մեր եկեղեցին ամուսնության վերաբերյալ ունի զարեքով մշակված, կատարելագործված ու սրբացված օրենքներ, որոնք ամուսնանալուց առաջ պետք է իմանալ և հետագայում էլ սրբությամբ կատարել:

Նախ՝ ամուսնությունը թույլատրվում է ազգակցական առնվազն յոթը սերնդափոխությունից հետո, այսինքն՝ յոթը պորտ հեռավորությամբ: Մերձամուսնությունը համարվում է անբարոյականություն: Նաև՝ մերձամուսնությունից ծնված երեխաները մեծ մասամբ ստողջ չեն լինում համարյունության պատճառով:



Վ. ՎԱՆԵՍՅԱՆ—ՍՆՐՄՆԱԾՍՆԸ (1990 թ.)

Որպեսզի ամուսինները երջանիկ լինեն և ամուր
ընտանիք ունենան, ամուսնացողները պետք է լինեն
չափահաս՝ տասնյոթ տարին լրացած և պետք է սիրեն
միմյանց: Չի կարելի ամուսնանալ հարկադրաբար, կամ
շահի համար, կամ այլ նպատակներով:

*Պսակի խորհուրդը կատարվում է եկեղեցում՝ Աստծու
ներկայությամբ և հատուկ արարողությամբ: Ուստի
ամուսինները իրավունք չունեն քմահաճորեն կամ անհիմն
պատճառներով քաժանվել իրարից:*

Ամուսնությունը եկեղեցու կողմից լուծարվի է
ենթարկվում (ամուսինները կարող են քաժանվել) տարբեր
պատճառներով. երբ ամուսիններից մեկը անբուժելի հի-
վանդ է եղել մինչև ամուսնությունը և գաղտնի է պահել
կամ չի իմացվել, երբ ամուսիններից մեկը մահանում է,
երբ յոթը տարի գտնվում է անհայտության մեջ, երբ
անբուժելի հիվանդություն է ձեռք բերում (հոգեկան հի-
վանդություններ և այլն), անբարոյականության պարա-
զային ընդհանրապես «ամուսնալուծում» արտոնվում է,
սակայն արգելվում է անբարոյական ճանապարհով գնա-
ցողի կրկնամուսնությունը:

Ամուսնության կարևոր պայման է նաև այն, որ
ամուսնացողները պետք է միևնույն եկեղեցու զավակներ
լինեն: Այսինքն՝ հայ ժողովրդի զավակը պետք է ամուս-
նանա հայի հետ, որն ունի նույն հավատը, ընդունում է
նույն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Իսկ
երբ պատահում են խառն ամուսնություններ, ապա
երկուսից մեկը պետք է հրաժարվի իր ազգային հավատից
և ընդունի մյուսինը:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Մատթ. ԺԹ 6, Երբ. ԺԳ
14 համարները:

ԸՆՏԱՆԵԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնազանդփեցե՛ք միմյանց Քրիստոսի երկյուզողի: Կանայք իրենց մարդկանց թող Հնազանդ լինեն, ինչպես Տիրոջը, որովհետև մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոս գլուխն է Եկեղեցու, և ինքն է Փրկիչը այդ մարմնի: Եվ ինչպես Եկեղեցին Հնազանդվում է Քրիստոսին, նույնպես կանայք թող Հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում: Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին, և իր անձը մատնեց նրա Համար, որ այդ սրբացնի ավազանի մաքրությամբ՝ խոսքով, որպեսզի նա իր առջև կանգնեցնի Եկեղեցին, որ ոչ մի արտա կամ ազտեղություն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ և անարատ: Նույն ձևով մարդիկ պարտավոր են սիրել իշանց կանանց, ինչպես իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում, որովհետև ոչ ոք երբեք իր անձը չի առում, այլ սնուցանում և խնամում է այն, ինչպես որ Քրիստոս՝ Եկեղեցին, քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից և նրա ոսկորներից: . . . Դուք էլ նույնպես ամեն մեկը նույնը արեք, որպեսզի յուրաքանչյուր ոք իր կնոջը այդպես սիրի, ինչպես իր անձը, և կեն երկնչի իր մարդուց:

(Եփես. Ե 21-33)



Ձեռնադրություն ասելով հասկանում ենք այն խորհուրդը, երբ հավատքի, կրոնական ու իմացական առումով պատրաստված անձը հոգևոր աստիճան է ստանում: Կոչվում է ձեռնադրություն, որովհետև արարողություն կատարող հոգևորականը ձեռքը դնում է հոգևոր աստիճան ստացուլի գլխին և արտասանում համապատասխան աղոթքները: Հայ Եկեղեցու հոգևորականը պետք է ծնված լինի Հայ Եկեղեցու դավանանքին հավատարիմ, օրինական ամուսնուքյամբ և ազուրքյամբ հայ ծնողներից, ֆիզիկապես լինի անբրի: Տվյալ անձի ձեռնադրության համար պետք է իր համաձայնությունը տա նաև այն համայնքը, որի համար ձեռնադրվում է:

Ձեռնադրության խորհուրդը Հիսուս հաստատեց իր համարածան օրը, երբ օրհնեց առաքյալներին և պատվիրեց քարոզել քրիստոնեությունը և մկրտել ամբողջ աշխարհում և մկրտություն կատարել՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ձեռնադրության արարողությամբ հոգևոր կոչման նվիրվողը դառնում է առաքյալների գործի շարունակող և Եկեղեցու պաշտոնյա: Նա է կատարում Եկեղեցու խորհուրդներն ու արարողությունները և իր վարձով ու կենցաղով պարտավոր է օրինակ հանդիսանալ հավատացյալների համար: Հոգևորական ձեռնադրելու իրավունքը վերապահվում է Կարողիկոսին ու եպիսկոպոսներին:

Քահանա ձեռնադրելիս ձեռնադրվողին տրվում է նոր անուն, իսկ արարողության վերջում Սուրբ Մեղանով օծում են նրա ճակատն ու ձեռքերի փեղքը:

Եկեղեցում ընդունված է ձեռնադրության կամ հոգևոր կոչումի երեք կարգ. սարկավազություն, քահանայություն և եպիսկոպոսություն:

Մինչ սարկավազության աստիճանը Եկեղեցում կան ևս հինգ աստիճաններ՝ դեռնապանություն, դպրություն,

•երզմնեցուցչութիւն, ջանքնկալութիւն և կիսասարկավագութիւն, որոնք բոլորը միասին կոչվում է դպրութեան աստիճան: Այս աստիճանները տրվում են հատուկ արարողութեամբ՝ եկեղեցում համապատասխան ծառայութիւն կատարելու համար:

ՍԱՐԿԱՎԱԳՈՒԹՅՈՒՆ

Սարկավագ բառացիորեն նշանակում է եկեղեցու սպասավոր, ծառայող:

Սարկավագի պաշտոնն է՝ Ավետարան կարդալ արարողութիւններին ժամանակ, պատարագի ընթացքում վերաբերում անել, այսինքն պատարագի նվիրական սկիիք (արծաթյա թաս, անոթ) և Հիսուսի նվիրական մարմինն ու արյունը խորհրդանշող հացն ու գինին մատուցել պատարագչին և օգնել հոգևորականին արարողութիւններին, խորհրդակատարութիւններին ժամանակ: Սարկավագը պետք է *Ֆաջածանոթ լինի Ավետարանին, իմանա արարողութիւններն ու խորհրդակատարութիւնները, ինչպես նաև ունենա կրոնական համապատասխան գիտելիքներ:*

Սարկավագը կարող է լինել ամուսնացյալ կամ ոչ ամուսնացյալ: Սարկավագը ձեռնադրվում է եպիսկոպոսի կողմից:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ

Քահանա բառացիորեն նշանակում է Աստու սպասավոր:

Հայ եկեղեցում ընդունված է ֆահանայութեան երկու կարգ՝ ամուսնացյալ և կուսակրոն ֆահանայութիւն:

Ամուսնացյալ ֆահանան պետք է ամուսնացած լինի ձեռնադրութիւններից առաջ:

Քահանան իրավունք ունի կատարել բոլոր խորհրդակատարութիւններն ու արարողութիւնները, բացի ձեռնադրութիւններից:

Կուսակրոն ֆահանայութիւնը մեր եկեղեցում կապ ունի վանական զրվածքի հետ: Կուսակրոն ֆահանայութեան աստիճաններն են. արեղայութիւն, վարդապետութիւն, ծայրագույն վարդապետութիւն, եպիսկոպոսութիւն, արքեպիսկոպոսութիւն և կարդիկոսութիւն:

ա). Արեղայութիւն.

Արեղա նշանակում է միայնակյաց: Արեղայութիւնը կուսակրոն ֆահանայութեան առաջին աստիճանն է: Արեղան հրաժարվում է աշխարհիկ կյանքից, չի ամուսնանում և իր կյանքը ամբողջովին նվիրում է Աստուծու, Քրիստոնեական հավատին, եկեղեցուն և իր հավատացյալ ժողովրդին:

Կուսակրոն ֆահանայութեան խորհրդանիշը վեղարն է (գլխի ծածկույթը), որ տրվում է հատուկ արարողութեամբ, իր կամքի համաձայն ֆահանա ձեռնադրվելուց հետո, միաժամանակ նկատի են առնվում տվյալ անձի արժանիքները:

բ) Վարդապետութիւն.

Կուսակրոնութեան հաջորդ աստիճանը, արեղայութիւնից հետո, վարդապետութիւնն է: Վարդապետ նշանակում է ուսուցիչ: Վարդապետութեան աստիճան տրվում է ոչ թե ձեռնադրութեամբ, այլ տվչութեամբ՝ եպիսկոպոսի կամ կարդիկոսի կողմից: Վարդապետութիւնը եկեղեցու գիտական աստիճանն է: Վարդապետական աստիճան ստանալու համար արեղան ներկայացնում է մի արժեքավոր ուսումնասիրութիւն՝ վարդապետական բեզ, կրոնական, մատենագիտական, պատմական կամ այլ բեմայով: Այս առումով վարդապետական աստիճանը համապատասխանում է մագիստրոսի կամ գիտութիւնների բեկնածուի աստիճանին:

Վարդապետ եկեղեցում ավետարանի ֆարգիչն է, ուսուցանողը, Քրիստոսավանդ հավատքը պաշտպանողը, ուսումնասիրութիւններ պատրաստողը և այլն:

գ) Ծայրագույն վարդապետութիւն.

Վարդապետութեան բարձրագույն աստիճանը կոչվում է ծայրագույն վարդապետութիւն: Այս աստիճանը տրվում է առավել արժանավոր վարդապետներին: Ծայրագույն վարդապետի աստիճան ստանալու համար վարդապետը ներկայացնում է ծայրագույն վարդապետութեան քնն: Ծայրագույն վարդապետութիւնը համապատասխանում է գիտութիւնների ղոկտորի աստիճանի:

դ) Եպիսկոպոսութիւն.

Եպիսկոպոս նշանակում է վերահսուչ, կրօնական-հոգևոր գործերը կառավարող:

Եպիսկոպոս կարող են ձեռնադրել առնվազն երկու եպիսկոպոսներ միասին կամ Կաթողիկոսը:

Եպիսկոպոսը վարդապետութեան աստիճան պետք է ստացած լինի, իսկ ծայրագույն վարդապետ կարող է և չլինել:

Եպիսկոպոսը լինում է բնմի առաջնորդ, եկեղեցական գործունեութեան ասպարեզի որևէ կարևոր բաժնի ղեկավար, վանահայր և այլն:

Առավել հեղինակավոր եպիսկոպոսին Կաթողիկոսի կողմից տրվում է *արքուքյուն*, այսինքն՝ ավագութիւն, որպես զնահատանի և պատվո նշան: Արքուքյան արժանացած եպիսկոպոսը կոչվում է *արեպիսկոպոս*:

Եպիսկոպոսին է վերապահված ինչպես բոլոր արարչութիւնները կատարելը, այնպես էլ հոգևորական ձեռնադրելը:

Եպիսկոպոսութեան աստիճանի մեջ է մտնում նաև *պատրիարքը*: Պատրիարք բառացիորեն նշանակում է հայրապետ, որովհետև պատրիարքի իշխանութեան ներքո լինում են մի քանի եպիսկոպոսներ: Մեր եկեղեցին ունի երկու Պատրիարքական Արքունք՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքութիւն և Թուրքիայի (կամ Կոստանդնուպոլսի) Հայոց Պատրիարքութիւն, որոնք ենթարկվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Միջին դարերում ունեցել ենք նաև *միտրոպոլիտութիւն* (օրինակ՝ Սյունյաց միտրոպոլիտը): *Միտրոպոլիտ* բառացիորեն նշանակում է ֆաղափ եպիսկոպոս, մայրաքաղաքի եպիսկոպոս: Իսկ Հայ եկեղեցու կառուցում միտրոպոլիտը եղել է կրօնական և ֆաղափական կյանքում ազդեցիկ շրջանի առաջնորդը: Սյունյաց միտրոպոլիտն իր իշխանութեան ներքո՝ ունեցել է տասներկու եպիսկոպոսներ:

ե) Կաթողիկոսութիւն.

Կաթողիկոսը՝ եկեղեցու ծառայողների, հոգևորականութեան առաջնորդն է, գլխավոր ղեմաբն: Նա նաև իր ազգի առաջնորդն է՝ հոգևոր առումով: Կաթողիկոսին է վերապահված եպիսկոպոս ձեռնադրել և օրհնել Մեռուքը: Կաթողիկոսն ընտրվում է ազգային ընդհանուր ժողովով, փակ ֆեկարկութեամբ, ցմահ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գլուխը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, որի նստավայրը Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է: Ունենք նաև Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, որի նստավայրը Անթիլիասն է (Լիբանան):

Ամենայն Հայոց Կաթողիկոսին են ենթարկվում Երուսաղեմի Հայոց Պատրիարքը, Թուրքիայի Հայոց Պատրիարքը և ներքին ու արտաքին բոլոր բնմերը: Այս պատճառով էջմիածնի Կաթողիկոսը կոչվում է *Մայրապետ* Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ևս ընդունում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահութիւնը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրավասութեան ենթակա են Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի հայ գաղթօջախները:

Առաջադրանք. գորս գրել Աստվածաշնչից Բ Կորնթ. Ժ 18 համարը:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԵՃՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՂՐԱՑՈՒ ԽՐԱՏՆԵՐԻՑ

(5-րդ դար)

Քեզ [Աստված] Հրամայեց օրվա Հացը [ճակատիդ/ ջրտինքով ուտել, իսկ դու ուզում ես՝ Հավիտենական կյանքը քնով ստանալ: Քո կյանքի Համար յոթանասուն տարի է սահմանված, այն էլ ցավով ու Հեծեծանքով. [մինչդեռ] դու ուզում ես Հաղարամյա ժամանակը առանց ցավի ժառանգել:

Մարմինդ նեղիր գիտությամբ ու Գրքի վկայությամբ:

Երբ դու աղոթում ես, իմացիր, թե ում Հետ ես խոսում կամ ինչ ես ուզում. գաղտնիքդ քո մեջ ամփոփիր:

Երբ Աստված քեզ փափուկ կերակուր կամ մաքուր Հաց, կամ միրգ է ուղարկում, մինչև ուտելը Քրիստոսի բաժինը կարիքավոր մարդուն աուր, որ Քրիստոս քեզ սեղանակից լինի:

Եթե քո նկատմամբ սեր տածեն, զոհացիր Աստծուց, իսկ եթե Հսիրեն, մի տրտնջաւ ուրիշին էլ մի տրտնեցնիր, այլ քեզ նեղիր փոքր-ինչ լուսությամբ, որովհետև ով պատերազմում է, Համբերության կարիք է զգում:

Այս կյանքը պատերազմ է:

Շատ լավ է աղոթելիս ձեռքերը վեր բարձրացնել դեպի Աստված, բայց առավել կարևոր է մարդկանց ծառայել:

Արբ աղոթքի ժամանակ ձեռքերդ վեր ես բարձրացնում, երեսիդ դիմաց պահիր և զգուշացիր օտարոտի մաքերից:

ԿԱՐԳ ՀԻՎԱՆԴԱՑ ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Այս խորհրդակատարման նպատակն է աղոթքի միջոցով Աստծուց առողջություն հայցել հիվանդի համար, իսկ մահամերձին մի վերջին անգամ հիշեցնել հավատի մասին, որպեսզի հավատի շնորհիվ թեթևանան նրա հոգեկան ու մարմնական տառապանքները: Արարողության ժամանակ հիվանդը, եթե ի վիճակի է, նախ խոստովանում է իր մեղքերը և բողոքում (ներում) ստանում, իսկ եթե ի վիճակի չէ խոստովանելու, ապա հոգևորականն ինքն է կարդում մարդու կողմից գործվող հնարավոր բոլոր մեղքերի անունները:

Այսպիսով, կարգ հիվանդացի կամ հիվանդների այցելության նպատակն է առողջություն պարզելի հիվանդին, թեթևացնել նրա տառապանքները, բողոքում տալ նրա գործած մեղքերին, ինչպես նաև վերահաստատել հավատի մեջ՝ հավատով հանդերձալ կյանք գնալու:

Իսկ Վերջին օժան արարողությունը միացվել է Մկրտության խորհրդի հետ: Հոգևորականների պարագային, որպես Տիրոջ օժյակների, կատարվում է Վերջին օժում՝ մահանալուց հետո:

Կարգ հիվանդացը կրկնելի խորհուրդ է, այսինքն, եթե հիվանդը առողջանա, ապա հարկ եղած եղած դեպքում այս խորհուրդը կարելի է կրկնել:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Հովհ. Զ 51-52 համարները:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՏՎԱԾ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԻՆ ՌԻՂՂՎԱԾ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԽՈՍՔԻՑ

«Շատ պատերազմներում եմ եղել ես, և դուք էլ ինձ
Հեռ. տեղ կար, որ քաջարար Հաղթեցիկնք թշնամիներին,
տեղ էլ կար, որ Հաղթեցիկ մեզ. բայց ավելի շատ այն է,
որ Հաղթող ենք դուրս եկել և ոչ թե Հաղթված: Բայց այդ
բոլորը մարմնավոր պարծանք էր, որովհետև անցավոր
թագավորի Հրամանով էինք մարտնչում: Ով փախչում էր,
վատանում էր երևում աշխարհում և նրանից անողորմ
մահ էր ստանում. իսկ ով քաջությամբ առաջ էր ընկնում,
քաջի անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր
ստանում անցավոր ու մահկանացու թագավորից: Եվ
մեզնից ամեն մեկս էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ
ունենք մեր մարմինների վրա, և ուրիշ շատ քաջություն-
ներ էլ են եղել, որոնց Համար և մեծամեծ պարգևներ են
ստացվել: Անարգ և անողուտ եմ Համարում այդ քաջա-
գործությունները և ոչինչ բաներ՝ այդ քաջամթիվ
պարգևները, որովհետև բոլորն էլ ոչնչանալու են:

Իսկ արդ՝ եթե մահկանացու Հրամանատուի Համար
այնպիսի քաջ գործեր էինք կատարում, ինչքան ավելի ևս
[պետք է կատարենք] մեր Անմահ թագավորի Համար, որ
Տերն է կենդանիների և մեռելների և բոլոր մարդկանց
գատելու է իրենց գործերի Համեմատ: Ձե՞ որ եթե խիստ
շատ ապրելով ծերանանք, միևնույն է՝ այս մարմնից
պետք է բաժանվենք, որպեսզի մտնենք կենդանի Աստու-
մոտ, որից այլևս չպետք է բաժանվենք:

Արդ, ազաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ,
մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից
ավելի լավ եք և Հայրենական դաճի պատվով՝ ավելի
բարձր. բայց երբ ձեր Հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ

առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը արտբալուր և
բաղձալի թվան մեծերիդ և փոքրերիդ ականջներին:
Ձերկնչն՝ ու չվախենանք Հեթանոսների բազմու-
թյունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահուկի սրի դեմ
թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե Տերը Հաղթու-
թյունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրա գորությունը,
որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե
Հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու
այս պատերազմում, ընդունենք դուքայն սրտով, միայն թե
արիւթյան ու քաջության մեջ վախկոտություն
չխառնենք ... »:

(ԵՂԻՇԵ)



ՇԱՐԱԿԱՆ

Շարական կոչվում են հոգևոր երգերը, որոնք երգվում են Աստվածպաշտական արարողությունների ու խորհուրդների ժամանակ: Շարական բառը կազմված է շար(ժ) արմատից և ական մասնիկից:

Շարականներ հայ իրականության մեջ սկսել են գրվել 5-րդ դարից և մինչև 12-րդ դար կոչվել են պարզապես հոգևոր երգեր: Իսկ մինչ 5-րդ դար, մինչ գրերի գյուտը, մեր եկեղեցիներում հոգևոր երգերը երգվում էին հունարեն կամ ասորերեն: Գրերի գյուտից անմիջապես հետո Սուրբ Սահակն ու Սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրեցին հայերեն առաջին հոգևոր երգերը, որոնք մինչև 15-րդ դար աստիճանաբար ավելացան ու ամբողջացան: Հայկական շարականները մեր ժողովրդի կարևոր հոգևոր արժեքներից են և իրենց ինքնուրույն տեղն ունեն համաշխարհային երաժշտական արվեստի պատմության մեջ:

Շարականներ պարունակող գիրքը կոչվում է «Շարակնոց»:

Շարականներն ըստ բովանդակության լինում են՝ Աստվածաշնչական պատմություններ և կամ նվիրված են Հայր Աստծուն, Որդուն, Սուրբ Հոգուն, Մարիամ Աստվածածնին և սրբերին: Կան շարականներ նաև պատմական և ազգային թեմաներով, ինչպես, օրինակ, «Էջ Միածինն ի Հորէ», Վարդանանց նահատակների նվիրված և այլն:

Շարականները գրվել և երգվում են ըստ ուր եղանակների, որոնք կոչվում են *ձայներ* կամ *ձայնեղանակներ*: Այդ եղանակների կամ ձայների առաջին տարբերակը կոչվում է առաջին կամ այբ ձայն (աձ), երկրորդը՝ երկրորդ կամ բեն ձայն (բձ), երրորդը՝ երրորդ կամ գիմ ձայն (գձ), չորրորդը՝ չորրորդ կամ դա ձայն (դձ): Այս ձայներից յուրաքանչյուրն ունի իր տարատեսակը, որոնք կոչվում են *կողմ ձայներ*, առաջին կամ այբ կողմ (ակ), բեն կողմ (բկ), գիմ կողմ (գկ) և դա կողմ (դկ): Բացի

եղանակների այս ուր տեսակներից, բլ և դկ ձայներն ունեն ևս մեկական տարատեսակ, որոնք կոչվում են ստեղիներ:

«Շարակնոց»-ում կան շուրջ 2000 շարականներ, որոնք բաշխված են ըստ տոների, նպատակ ունենալով պատշան հանդիսավորություն տալ արարողություններին:

15-րդ դարում Գրիգոր Տառևացին, վերջնականապես կարգավորելով մեր «Շարակնոց»-ը, եղած շարականները համարել է ամբողջական և բավարար և սահմանափակել նոր շարականների ազատ մուտքը եկեղեցուց ներս:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Մատթ. ԻԲ 57 համարը:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ
(ԴԿ)

*Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաջինեաց,
Վառեցար զինու Հողւոյն՝ արիարար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթշնամին,
Վարդագոյն արեամբք քո պսակեցեր զեկեղեցի:*

*Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Քոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս,
Քորէն խորհրդական և ծանուցեալ անուև բարի,
Խաչեւոյն վկա եղեալ՝ Հեղմամբ արեան պսակեցաւ:*



ԱՍՏՎԱԾՊԱՇՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստվածպաշտական արարողութիւններ ասելով՝ այստեղ նկատի ունենք եկեղեցական արարողութիւնները, յոր խորհուրդները, բարեպաշտական ծեսերը, ժամերգութիւններն ու պատարագը:

Հավատքի գլխավոր պայման է պաշտամունքն առ Աստված: Աստծու հանդեպ պաշտամունքը բխում է հավատացյալ, ճշմարիտ քրիստոնյայի հոգուց, ի խորոց սրտի: Աստվածպաշտական արարողութիւնը Աստծու հանդեպ հավատքի ու սիրո արտահայտութեան ձևն է: Պաշտել Աստծուն՝ նշանակում է հավատալ Աստծու գոյութեանը, ամենակարողութեանն ու մարդկանց հանդեպ ունեցած սիրուն, փառաբանել Աստծուն՝ որպես ամեն ինչի արարիչ ու պահպանող, Աստծու հանդեպ ունենալ հավատ, հույս, սեր ու երկյուղածութիւն: Աստվածպաշտական արարողութիւնները լինում են *անհատական* (դրանք անհատական, առանձին աղոթքներ են) և *ընդհանրական*: Աստվածպաշտական ընդհանրական արարողութիւններ են ժամերգութիւններն ու պատարագը, խորհուրդները, տոներն ու հոգևոր-բարեպաշտական արարողութիւնները: Աստվածպաշտական արարողութիւնները կատարվել են առաջյալներից սկսած:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ունի Աստվածպաշտական արարողութիւնների հատուկ կարգ, որ ժամանակի ընթացքում գրվել ու կատարելագործվել է նշանավոր եկեղեցական գործիչների կողմից:

Յուրաքանչյուր Աստվածպաշտական արարողութիւն սկսվում ու ավարտվում է «Հայր մեր» Տերունական աղոթքով:

Ժամերգութիւնները, որպես Աստվածպաշտական արարողութիւններ, կատարվում են օրվա տարբեր

Ժամերին և քստ այնմ կոչվում են.

Գիշերային

Առավոտյան

Արևագալի

Ճաշու երեք ժամերգությունները

Երեկոյան

Խաղաղական

Հանգստյան

Ժամերգությունների ժամանակ ընթերցվում են համապատասխան աղոթքներ, Աստվածաշնչական հատվածներ, քարոզներ, երգվում են շարականներ, երգեր և այլն: Գիշերային ժամերգությունը կատարվում է լուսարացից առաջ, առավոտյանը՝ լուսարացին, արևագալին՝ արևածագին, ապա հաջորդում են ճաշու ժամերգությունները, իսկ երեկոյան կատարվում են մյուս երեք ժամերգությունները:

Աստվածաշնչական արարողությունների մեջ առանձնակի տեղ ունի պատարագը:

Առաջադրանք. գուրս գրել Աստվածաշնչից. Ա. Հովհ. Ե 14 համարը:



Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆԸ - ԳԵՔՍԵՄԱՆԻ ԱՂՈՐԸ (1900 թ.)

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՈՍՔ ԱՍՏՈՒԾՈ ՀԵՏ

Ընդունի՛ր սիրով, մեծագո՛ր Աստված,
Ազաչանքները դառնացած սրտիս.
Ամոքահարիս մոտեցի՛ր մեծիդ բարեգրորայամբ.
Փարատի՛ր իսպառ, ամենապարզև՛,
Տխրությունն իմ այս նշավակելի.
Այս անտանելի ծանրութունները
Վերցրո՛ւ, բոթավի՛ր ինձնից, ողորմա՛ծ.
Կտրի՛ր մահացու սովորություններն այս, ո՛վ հնարագետ.
Ավարի՛ մատնիք, մշտապես հաղթող,
Հրապույրները մոլորապատիր:
Տրի՛ր, վերնայի՛ն, գայթակղության մառախուղն անհետ.
Խափանի՛ր, փրկի՛չ, հարձակո՛ւմները կորուստ նյութողի.
Ջնշի՛ր, ծածկատես, որդապյներն այս նեղ գ ու
պատրական.
Խոյացումներն այս խոռվարարի խորտակի՛ր, հզո՛ր:
Կնքի՛ր անունովդ լուսանցույցն հարկիս.
Պարփակիր ձեռնո՛վդ առատազն իմ տան,
Օծի՛ր էն արյամբ մուտքն իմ սեղյակի,
Սուրբ նշանը Քո դրոշմի՛ր ամուր
Մաղթողիս բուրբ ճամփեփի վրա.
Աջովդ ամբացրո՛ւ խշախի հանգստյան
Մաքրի՛ր անկողնուս ծածկարանն իսպառ վարմ ու
բակարդից,
Կամճովդ պահպանի՛ր հոգիս տառապյալ
Ու մարմնիս շունչը, քեզնից շնորհված, անարատ պահի՛ր,
Շրջափակի՛ր ինձ ամուր՝ երկնային գորբիդ բազմությամբ՝
Որպես ղիմամարտ դևերի գեղին:
Սուրբ Աստվածածնիդ և ընտրյալների բարեխոսությամբ՝
Շնորհի՛ր նիրհիս այս մահահանգույց՝
Խորին գիշերում բերկրալի հանգիստ:

Ամփոփիր մտիս և զգալուր յան
Տեսանելիի պատուհանները, պարուրի՛ր այնպես,
Որ մեան նրան անասանելի, խաղաղ, անբրկյուղ՝
Ամեն մրրկահույզ պերթաումից,
Առօրյա նանիր հոգսերից բոլոր,
Անըշական սին երազանքներից,
Այս ցնորքներից խենք ու խոլական,
Եվ հիշատակով հույսիդ պահպանվեն անվթար, անեղծ:
Որպեսզի կրկին, երբ որ սրափվեմ այս ծանր ֆնից,
Լիովին զգաստ ու հոգեմորոզ
Մի զվարթուրյամբ կանգնած Քո առաջ՝
Մաղբանքներն իմ այս, հավատիս բուրմամբ,
Ո՛ր՛կ ամենօրն իյալ ու աննառելի փառի բազավոր,
Ջուգաճայնուրյամբ ողջ երկնագուճար
Փառաբանական քաղմություններիդ,
Բարձունքներդ ի վեր առա՛մեմ առ Քեզ:
Քանզի դու բոլոր արարածներից
Փառավորյալ ես հավիտյանս հավիտենից. ամեն:

(Գ. Նարեկացի, «Մատյան ողբերգության» Բան ԺԲ)



ՊԱՏԱՐԱԳ

Պատարագը Հիսուսի չարչարանքների, մահվան ու հարության հիշատակումն է:

Պատարագ քառացիորեն նշանակում է ընծա՝ այսինքն այն արարողությունը, որի ժամանակ նախապես, հատուկ պատրաստված հացն ու գինին պատարագի արարողությամբ սրբազործվում, փոխարկվում և ընկալվում են որպես Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը՝ մատուցված մարդկանց մեղքերի բողոքյան ու փրկության համար:

Պատարագի խորհուրդը հաստատվել է Հիսուսի կողմից՝ վերջին ընթրիքի ժամանակ:

Պատարագի արարողությունը կատարվում է եկեղեցում, հոգևորականի կողմից: Պատարագ մատուցվում է կիրակի և տոն օրերին: Հարկ եղած դեպքում պատարագ կարելի է մատուցել նաև եկեղեցուց դուրս.

ա. Պատարագի ժամանակ:

բ. Ոչ քրիստոնյա երկրում, ուր չկա եկեղեցի:

Պատարագի ժամանակ օգտագործվում է անթթիմոր (բաղարջ) հաց և խաղողի մաֆուր գինի: Հացը պատրաստվում է նախօրոք, կյուր ձևով, կենտրոնում խաչելության կամ հարության պատկերով և կոչվում է *ճշար*: Գինու մեջ բարթաված *ճշարով* կատարվում է հաղորդությունը, ինչպես նկարագրված է «Հաղորդություն» բաժնում:

Պատարագը ոչ միայն հիշատակումն է Հիսուսի չարչարանքների, մահվան ու հարության, այլ նաև հավատացյալի ընծայարեումն է Աստուծո՛ւն՝ հացի ու գինու միջոցով, որպես շնորհակալության ու երախտիքի արտահայտություն: Պատարագը նաև հավատացյալի հավատն առավել ամրացնելու, զորացնելու համար է: Հիսուսի մարմինն ու արյունը խորհրդանշող *ճշար*ն ու գինին մեզ հիշեցնում են այն օրվա մասին, երբ Հիսուս իր մարմինն

ու արյունը գոհարեց խաչափայտի վրա՝ մեղքերից մարդու մեքրման ու փրկության համար: Պատարագը խնդրանք է նաև առ Աստված՝ նեշեցյալների հոգիների փրկության համար:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատարագը քրիստոնյա աշխարհին հայտնի է որպես ամենագեղեցիկ ու կատարյալ պատարագներից մեկը: Երբորդ դարում գրված պատարագամատույցը (պատարագ մատուցելու գիրք), որ ընդունվել է բոլոր եկեղեցիներում, հետագայում նոյազվեց և գեղեցկացվեց մեր մեծ մատենագիրների՝ Հովհաննես Մանդակաճու, Գրիգոր Նարեկացու և այլոց կողմից:

Պատարագի ժամանակ եթե ցանկանում եմք հաղորդություն ստանալ, ապա պետք է նախ հոգևորականին խոստովանել մեր մեղքերը, իսկ հաղորդություն ստանալուց հետո աշխատել այլևս մեղք չգործել: Պատարագին մասնակցելիս անհրաժեշտ է պահպանել լուսբյուր, երկյուղածություն, հետևել պատարագի ընթացքին, ավելորդ շարժումներ չանել, պատարագի կեսից եկեղեցուց չզնայ, հարգել ընդունված կարգը:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Բ կորնք. Ա 9 համարը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅՅԵՐԻ՝ ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ՊԱՐՄԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԴԻՄԱԴՐԵԼԸ

Աստու սերն ավելի մեծ է, քան ամեն երկրավոր մեծություն. և այնպես աներկյուղ է դարձնում մարդկանց, ինչպես Հրեշտակների անմաքմին զորքերը, ինչպես որ աշխարհի Հենց սկզբից կարելի է տեսնել շատերին շատ անգամ և շատ տեղերում: Այն մարդիկ, որոնք Աստու սիրով, ինչպես զենքով, սպառազինված էին, ամենևին չխնայեցին և անարի վատասիրտների նման չվախեցան ո՛չ մահից, ո՛չ գուլքի հափշտակությունից, ո՛չ սիրելիների խոզխոտումից և ո՛չ էլ ընտանեկանների զերությունից, Հայրենի երկրից դուրս գալուց և օտար երկրում ստրկություն մեջ ընկնելուց. նրանք բանի տեղ չզբին այս բոլոր չարչարանքները, միայն թե միաբան ման Աստու Հետ, որպեսզի միմիայն Նրանից չմերժվեն, և Նրան իրենց մտքում գերադասեցին բոլոր տեսանելի մեծություններից: Եվ ուրացությունը մեռելություն էին Համարում, իսկ Աստու Համար մեռնելը՝ անսոց կենդանություն. երկրի վրա ծառայելը՝ իրենց կյանքի ազատություն, և իրենց անձերն օտարություն մասնելը՝ Աստու Հետ գտնվել:

Ինչպես որ այս ժամանակ մեր աչքերով տեսանք, որովհետև Հայոց աշխարհն էլ նույն նաճատակությամբ նաճատակվեց:

Որովհետև մեր մեծ Վարդանը տեսավ իր աշխարհի երկպառակությունը, սակայն ամենևին չվախեցավ: Թեպետև ստուգեց-իմացավ զեռևս իրեն միաբան-վածներից շատերի երկմտությունն էլ. այնուամենայնիվ ինքն իրեն սիրտ տվեց և իր զորքերին էլ քաջալուրից, քանի որ Հենց ինքը դեռ գրաված էր պահում

Թագավորանիտ տեղերն այն նախարարների հետ միասին, որոնք Հանձնատվեցին սուրբ ուխտից: Հրաման տվեց ամբողջ զորքերին Հավաքել Արտաշատ քաղաքում, այն ետ կացածների փոխարեն, որոնք գնացին Սյունյաց իշխանի ետևից, ամեն մեկին տվեց նրանց զորքերը, որովհետև ամբողջ երկիրը դեռ նրա իշխանություն տակ էր:

Եվ նրանք բոլորը շտապով եկան-Հասան պատերազմի վայրը, նրանք, և ովքեր ի բնե Հաստատ էին մնացել իրենց տեղում:

ԵՂԻԾԵ



ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Հիսուսի Համբարձումից հետո, ինչպես գիտենք, առաջյալներն սկսեցին քրիստոնեությունը փարոզել և տարածել տարբեր երկրներում: Նրանցից թաղեոս և Բարդուղիմեոս առաջյալները եկան Հայաստան և հիմնեցին առաջին քրիստոնեական համայնքները:

Այդ ժամանակ Հայաստանում կամ Հայքում բազմաստվածություն էր: Մեր նախնիները, հույների ու պարսիկների նման, մտածում էին, թե կան առանձին արևի աստված, քերթուքյան աստված, սիրո աստված և այլն: Հայ հեթանոս աստվածներից մի մասը պատմական անձնավորություններ էին, որոնց մասին ժամանակի ընթացքում հորինվել էին անասպեական պատմություններ, մի մասը՝ պարսկական (պարթևական), մի մասն էլ՝ հունական հեթանոս աստվածների նմանակն էին: Հայաստանի արևելյան մասում գերիշխում էին պարսկական հավատալիքները, արևմտյան մասում՝ հունական: Կային նաև մտացածին, անասպեական պատմություններ:

Երբ առաջին դարում թագեոս ու Բարդուղիմեոս առաջյալները Հայաստան եկան ու սկսեցին քրիստոնեությունը փարոզել, բազմաթիվ հայեր ընդունեցին նոր, նշմարիտ կրոնը: Առաջացան քրիստոնեական մեծ համայնքներ և սկսեց կազմավորվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցին: Առաջին երեք դարերում քրիստոնեությունը Հայաստանում արզելված կրոն էր, և քրիստոնյաները հալածվում էին ամենուրեք: Սակայն երրորդ դարում փոխվում է դրությունը: 226 թվականին Պարսկաստանում տեղի է ունենում պետական հեղաշրջում: Պարսկաստանում վերջանում է պարսիկ Արշակունիների գահակալությունը, և գահն անցնում է Սասանյան տոհմին: Սասանյան Պարսկաստանը աշխատում է իր իշխանությունը ենթարկել նաև Հայաստանը, վերացնել

Հայաստանում գահակալող Արշակունցիներից, որոնք պարսիկ Արշակունցիների մի ճյուղն էին, Հայաստանում լիակատար կերպով տարածել պարսկական կրոնը և ձուլելով հայերին, մեկընդմիջ տիրանալ հայոց երկրին: Ահա այդ ժամանակ է, որ իր գործունեությունն է սկսում Գրիգոր Լուսավորիչը: Նա կազմակերպում է Հայաստանում գոյություն ունեցող քրիստոնեական համայնքները, առավել տարածում ու ամրապնդում քրիստոնեությունը, սակայն ձեռքարկվում Տրդատ Մեծի կողմից ու նեղվում խոր վիրապ: Բայց շուտով Տրդատ թագավորը հիվանդանում է: Իրան առում են, որ իրեն կարող է բուժել միայն խոր վիրապում բանտարկված Գրիգորը: Թագավորը Գրիգոր Լուսավորչին դուրս է հանում խոր վիրապից: Լուսավորիչը բժշկում է թագավորին: Տրդատը Գրիգոր Լուսավորչից ամրոցական կերպով իմանում է նաև քրիստոնեության մասին, հավատում և ընդունում է քրիստոնեությունը: Այնուհետև տեղի է ունենում Տրդատ Մեծի և արևելիքի մկրտությունը Գրիգոր Լուսավորչի կողմից: Տրդատ Մեծը հասկանում է նաև, որ և՛ Պարսկաստանին, և՛ Բյուզանդիային դիմադրելու համար միակ նաևապարիը ազգովին նոր կրոնը՝ քրիստոնեությունը ընդունելն է, որը նախ չէ ո՛չ պարսկական, և ո՛չ էլ հունական կրոններից: Միայն քրիստոնեությունը, միաստվածության գաղափարով և ճշմարիտ հավատով կարելի էր միավորել հայ ժողովրդին և փրկել ձուլման վտանգից: Եվ 301 թվականին Տրդատ Մեծը հրամայում է քրիստոնեությունը ընդունել և նաևաչել որպես միակ և պետական կրոն ամբողջ Հայաստանում:

Քրիստոնեության ընդունումով հայ ժողովուրդը համախմբվում է Հիսուսի հավատով և «Հանուն հավատքի, հանուն հայրենիքի» նշանաբանով պայքարելով բոլոր քջեռամիների դեմ՝ իր գոյության հաղթական իրավունքն է պահպանում մինչև այսօր:

Առաջադրանք. դուրս գրել Աստվածաշնչից Հովհ: Ը 31 համարը:


ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ (Պատմություն հայոց, գլ. Գ)

Ջի թէպէտ և եմք անու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոյժ անգամ նուանեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի:

(Որովհետև թիպետ մենք փոքր անու (ազգ) ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորութեան տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջութեան շատ գործեր կան գործված, գրելու և Հիշատակելու արժանի):





ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐԿԱՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

Կարողիկոսին ողջունելիս կամ հրածեշտ տալիս ասում ենք՝ «Աստված օգնական, Վեհափառ Տեր»: Դիմելիս ասում ենք՝ «Վեհափառ Տեր» կամ «Ձերդ Սրբություն»:

Արքեպիսկոպոսին կամ եպիսկոպոսին ողջունելիս կամ հրածեշտ տալիս ասում ենք՝ «Աստված օգնական, Սրբազան հայր»: Դիմելիս ասում ենք՝ «Սրբազան հայր» կամ «Ձերդ Սրբազնություն»:

Վարդապետին կամ արքեպիսկոպոսին ողջունելիս կամ հրածեշտ տալիս ասում ենք՝ «Աստված օգնական, Հայր սուրբ»: Դիմելիս ասում ենք՝ «Հայր սուրբ»:

Քահանային ողջունելիս կամ հրածեշտ տալիս ասում ենք՝ «Օրհնեցե՛ք, Տեր տայր»: Դիմելիս ասում ենք՝ «Տեր հայր»:

ԱՂՈԹՔՆԵՐ՝

ԱՐԹՆԱՆԱԼԻՍ ԵՎ ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Արթնանալիս.

«Հայր մեր» և ապա.

Լցա՛մ առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացա՛մ և ուրախ եղա՛մ զամենայն աւուրս կենաց մերոց:

Քնելուց առաջ.

«Հայր մեր» և ապա.

Պահապան ամենայնի Քրիստոս. աջ Քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի. ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ, ի ննջել և ի յառնել՝ զի մի երբէք սասանեցայց: Եւ ողորմեա Քո արարածոց եւ ինձ րազմամեղիս:

ՍԵՂԱՆԻ ԱՂՈԹՔՆԵՐ

Ուտելուց առաջ.

«Հայր մեր» և այլա.

- Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պարզեւեալ է մեզ ի Տեառնէ. օրհնեալ է Տէր ի սարգեւս իւր. ամէն:

Ուտելուց հետո.

«Հայր մեր» և այլա.

- Զլիութիւն ի վերայ սեղանոյս անհատ և աննուաղ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

ԱՂՈԹՔ՝ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ

Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան.

Տէր, ուղղեա եւ առջնորդեա Հոգւոց մերոց եւ ամենայն Հաւատացելոց գնալ արդարութեան ճանապարհին եւ ի կեանսն յաւիտենից:

ԱՂՈԹՔ՝ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ:

ԶՂՋՈՒՄՆ (Խոստովանանք)

Մեղայ Ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ Սրբուհւոյ Աստուածածնին, եւ առաջի քո Հայր Սուրբ, զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, կամայ եւ սկամայ, դիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ Աստուծոյ:

Մեղայ Հոգւովս եւ զօրութեամբ սորա. մաօքս եւ շարժմամբ սորա. մարմնովս եւ զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ Հոգւոյս, խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ եւ ժխտութեամբ, զեղխութեամբ եւ անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ եւ թերամտութեամբ, մեղա՛յ Աստուծոյ:

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս, սոսլօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, Հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանասրկութեամբ, շոգմտութեամբ, քսու, դատարկաբանութեամբ եւ ծաղու, զբախօսութեամբ, Հերձախօսութեամբ եւ անիծաբանութեամբ, արտնջլով, դժգոհելով, բամբասելով եւ Հայէնջլով, մեղա՛յ Աստուծոյ:

Մեղայ գողութեամբ ձեռացս, ազակելով, զրկելով, Հարկանելով, սպանանելով եւ ընդ դարչս ամելով, մեղա՛յ Աստուծոյ:

Այլեւ մեղայ հօթիցս յանցանօք՝ մահացու մեղօք, Հպարտութեամբ՝ եւ մասամբք նորին, Նախանձու՝ եւ մասամբք նորին, բարկութեամբ՝ եւ մասամբք նորին, Ծուլութեամբ՝ եւ մասամբք նորին, ազակութեամբ՝ եւ մասամբք նորին, սրկրամոլութեամբ՝ եւ մասամբք նորին, բղջարիտութեամբ՝ եւ մասամբք նորին, մեղա՛յ Աստուծոյ:

Այլ եւ մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ,



ՎԱԼԵՍՅԱՆ— ԼՈՒՍԱՎՈՐՈՒ ԿԱԼՔԵՂԸ (1990 թ.)

յանձնատելացն եւ Հրաժարելիացն, զի ոչ գյանձնա-
ռականն կատարեցի եւ ոչ ի Հրաժարելիացն Հեռացայ: Ջորէնսն առի՝ եւ յորինացն Հեղգացայ, ի կարգս
քրիստոնէութեան Հրաւիրեցայ՝ եւ գործովս անարժան
գտայ, գիտելով զչար կամաւ կորացայ՝ եւ ի բարեաց
գործոց ես ինձէն Հեռացայ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ
ինձ: Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ, զի անթիւ են
յանցանք իմ, անասելի են անօրէնութիւնք իմ, աններելի
են ցաւք իմ եւ անբժշկելի են վէրք իմ, մեղա՛յ Աստուծոյ:

Հայր Սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ Հաշտութեան եւ
բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ. զի իշխա-
նութեամբդ որ տուեալ է՝ քեզ, արձակեսցես զիս ի կապից
մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած եւ թողութիւն
շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանացելոցն
եւ մոռացելոցն: Եւ ես կարգաւս քահանայական իշխա-
նութեան եւ Հրամանաւն Աստուածային՝ թէ «Զոր
արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս», նովին
բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ
մեղաց քոց, ի խորհրդոց, ի բանից եւ ի գործոց. յանուն
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Եւ զարձեալ տամ զքեզ ի խորհուրդս Սուրբ Եկեղեցւոյ,
զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն
եւ ի փառս Հանդերձեալ կենացն. Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Էջ միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա.
Զայնք Հնչեցին սանդարամետք անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԵՐԳ

Ամէն Հայի սրտից բխած,
Լսիր այս ձայն, ով Աստուած.
Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հօր.
Տէր, անասան պահիր Դու միշտ
Քո իսկ Հիմնած Մայր Աթոռ:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ

Դպիրներ

Քրիստոսի ժամանակ հրեական կյանքի ամենագործոն պաշտոնյաներն էին Դպիրները: Նրանք գրեթե միշտ հիշվում են Փարիսեցիների հետ միասին և հիմնականում Փարիսեցիներից առաջ. «Դպիրք եւ Փարիսեցիք» (Մարկ. Բ 16): Դպիրների պաշտոնը Օրենքի ուսուցումն ու մեկնությունն էր: Նրանք մեծ հեղինակություն էին վայելում հրեական կյանքում: Սակայն, քանի որ կառչած էին Օրենքի տառին, նորն ու առաջադիմականը երբեք չէին ընդունում: Այս պատճառով էլ Հիսուս Դպիրներին համարում էր Օրենքի սարուկներ և ոչ թե Օրենքի ուսուցիչներ:

Փարիսեցիներ

Եթե Դպիրների պաշտոնը Օրենքի ուսուցումն ու մեկնությունն էր, ապա Փարիսեցիների պաշտոնը այդ Օրենքը գործադրելն էր: *Փարիսեցի* բառացիորեն նշանակում է *անջատում*, քանի որ ապրում էին ժողովրդից անջատ և աշխատում էին ստացիորեն գործադրել Օրենքը: Ընդունում էին հոգու անմահությունը, հրեշտակների գոյությունը, նախախնամությունը: Սպասում էին Աստծու թափափորության վերահաստատմանը՝ Աստծուց ուղարկված *Փրկչի՝ Մեսիայի միջոցով*: Այս պատճառով էլ չընդունեցին Հիսուսի Մեսիա լինելը, քանի որ նա ոչ թե միայն հրեաներին փրկելու էր եկել, այլ ամբողջ մարդկությանը: Նրանք մեղադրում էին Հիսուսին Օրենքը չպահելու, մարդկանց մեղքերը ներելու և մաքսավորների ու մեղավորների հետ հարաբերություններ ունենալու համար:

Փարիսեցիների օրինապաշտությունը ձևականություն էր, որովհետև հետևելով Օրենքի տառին՝ չէին ըմբռնում նրա ոգին, իմաստն ու նպատակը:

Սաղուկեցիներ

Դպիրների ու Փարիսեցիների հետ Նոր Կտակարանում հիշվում են նաև Սաղուկեցիները: Սակայն Սաղուկեցիները նկարագրով ու դիրքով բոլորովին տարբեր են մյուսներից: Անվանումն ստացել են Աստվածաշնչի Թագավորաց գրքերում հիշատակվող Սաղուկյ ֆախանայի անունից (Բ Թագ. Ը 17, ԺԵ 24, Գ Թագ. Ա 34): Ներկայացնում են հրեաների առավել կրթված, զարգացած ու ազատամիտ տարրը: Նրանք բժախնդիր չէին Օրենքի նկատմամբ և չէին հնազանդվում Դպիրների ուսուցումներից: Չէին ընդունում հարությունն ու հոգու գաղափարները:

Սամարացիներ

722 թ. Քրիստոսից առաջ, Իսրայելի Սամարիա մայրաքաղաքի կործանումից հետո, Սորգոն Բ բազմվորը եկվորներով է բնակեցնում այդ շրջանը: Եկվորների ու տեղի հրեաների սերունդը հետագայում մերժվեց հրեաների կողմից և արժանացավ արիամարհանքի, որպես խառնացեղ ժողովուրդ:

Օրենք

Խոսքը հրեական Օրենքի (Թորա) մասին է, որի հիմքը Մովսիսական օրենքներն էին: Դա մի տեսակ հրեաների օրենսգրքն էր: Հատկապես առաջին դարում հրեաները կարծում էին, որ եթե ստացիորեն կատարեց Օրենքի բոլոր պահանջները, ապա կարգարարեան Աստծու առաջ: Այս պատճառով էլ նրանց մոտ նվազել էր հավատքը՝

Օրենքի ոգին: Հրեաները պաշտում էին Օրենքի տառին և ոչ բն' ոգուն:

Մաքսավորներ

Հրեաստանում հռոմեական ծառայության մտած հրեաներ, որոնք հիմնականում զբաղվում էին կայսրության համար հարկ' մասն հավաքելով: Արհամարհվում ու մերժվում էին մյուս հրեաների կողմից:

Տանար

Խոսքը երուսաղեմի տանարի մասին է: Հրեական հիմնական սրբատեղի, որ կործանվեց 75 թ. Քրիստոսից հետո: Տանարից մնացել է միայն մի պատ՝ «Լացի պատը»:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Նախագիտելիք	5
Աղոթք	10
Հավատք	14
Հավատքի գլխավոր կետերը	16
ա. Գոյություն Աստծու	16
բ. Կատարելություն Աստծու	17
գ. Ս. Երրորդություն	18
դ. Արարչագործություն	20
ե. Նախախնամություն	20
զ. Մարդեղություն Աստծու	21
է. Քրիստոսի եկեղեցի և եկեղեցու խորհուրդներ	24
ը. Աստվածային շնորհների բաշխում	25
թ. Ննջեցյալների հարություն	27
ժ. Վերջին դատաստան	27
Հավատո Հանգանակ	30
Աստվածաշունչ մատյանը	35

ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ

Հիսուսի ծնունդն ու պատանեկությունը	41
Հիսուսի մկրտությունը	44
Հիսուսի քարոզչությունը	46
Հիսուսի առաքյալները	48
Հիսուսի առակները	50
Հիսուսի հրաշագործությունները	54
Հիսուսի երկու գլխավոր պատվիրանները	56
Հիսուսի մահը	58
Հիսուսի հարությունը	62

ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցու խորհուրդները	67
Մկրտություն	69
Դրոշմ	72
Ապաշխարություն	74
Հաղորդություն	77
Պսակ ամուսնության	80
Զեռնադրություն	83
Սարկավագություն	84
Քահանայություն	84
ա. Աբեղայություն	85
բ. Վարդապետություն	85
գ. Ծայրագույն վարդապետություն	85
հ. Եպիսկոպոսություն	86
ե. Կարողիկոսություն	86
Կարգ Հիվանդաց կամ Վերջին օծում	89
Շարական	92
Աստվածպաշտական արարողություններ	95
Պատարագ	99
Քրիստոնեության մուտքը Հայաստան	103

ՀԱՎԵԼՎԱԾ

Հոգևորականներին դիմելու ձևերը	109
Աղոթքներ արքեանալիս և քննիւոց առաջ	109
Սեղանի աղոթքներ	110
Աղոթք՝ հանապարհ գնալուց առաջ	111
Աղոթք՝ գործ սկսելուց առաջ	111
Զրչումն	112
Արձակումն	113
Շարական Ս. Էջմիածնի	114
Հայրապետական մաղթերգ	115
Նոր Կտակարանը և հանդիպող անուններ	116